

ՆԱՄԱԿՆԵՐ, ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ — ПИСЬМА, ЗАМЕТКИ —

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ

(Թանասիրական ճշգրտումներ)

1. ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՆ ԵՎ ԶԱՔԱՐԻԱ ԵՐԿԻՉԸ

Ինչպես հայտնի է, մեծանուն Սայաթ-Նովան ևս մեկուսացած չի ստեղծագործել։ Իր մի շարք երգերում նա կատարել է նշումներ, ուր մատնացույց է արել, թե տվյալ երգը գրելիս՝ ինչ ստեղծագործություն է նկատի ունեցել։ Մասնագետները շնայած անդրադարձել են այդ հարցին, բայց մինչև օրս էլ այն բավարար քննության չի արժանացել։ Դրան խանգարել է հատկապես համապատասխան փաստերի պակասությունը։ Այս առումով կատարված ճշգրտումներից ուշագրավ է, օրինակ, Սայաթ-Նովայի «Տանի վուր ջան իմ...» երգի համար սկզբնապատճառ դարձած ստեղծագործության որոշումը։ Այդ երգի վերջում հեղինակը գրել է. «էսպես Արուսիկն ասած Թասերն չիևի խաղի հանգում»։ Դրա հիման վրա էլ մասնագետները նկատել են, որ խոսքը վերաբերում է Նաղաշ Հովնաթանի «Նստեմք ի մէջիս...» երգին, որի կրկնակն սկսվում է «Թասերն չիևի» տողով։ Բանասիրությունը պարզել է նաև, որ Սայաթ-Նովայի «Ուստի՜ գուքաս, դարիբ բլրու...» երգն էլ գրված է Նաղաշ Հովնաթանի «Ուստի՜ կու դաս, քաղցր բլրու...» երգի ազդեցությամբ։ Այս երկու անտարակուսելի փաստերը բացահայտում են այն անմիջական կապը, որ եղել է հայ միջնադարի այնպիսի խոշոր ներկայացուցիչների ստեղծագործությունների միջև, ինչպիսիք էին Նաղաշ Հովնաթանն ու Սայաթ-Նովան։ Նույն եղանակով պարզված է, որ Սայաթ-Նովայի «Յիս մե դարիբ բուրուլի պես...» երգը գրված է Դոստիի երգերից մեկի հետևությամբ, իսկ Դոստին էլ ճանաչված է որպես նրա վարպետ-ուսուցիչը։ Հասկանալի է, թե որքան կարևոր է համանման մյուս բոլոր փաստերի և վկայությունների պարզաբանումն ու ուսումնասիրությունը։ Այդ գործին նպաստած լինելու նպատակով, ահա, մենք այստեղ կծանրանանք Սայաթ-Նովայի և մի ուրիշ հայ հեղինակի ստեղծագործական առնչությանը, որի մասին խոսվում է առաջին անգամ։

Սայաթ-Նովայի «Մեջումի պես կորավ յարս...» և «էշխեմեն էնպես վառվիլ իմ...» երգերի վերջում պահպանված է հեղինակային հետևյալ ծանոթությունը. «էս երկու խաղերն էն ձենով՝ Բլրուլն նստած է վարթին, լավ կանչեր նա վարթի համար...»։ Արդ. ո՞վ է այս երգի հեղինակը և ի՞նչ է ներկայացնում իրենից մատնանշված երգը։ Այս հարցերը դեռևս ընդունելի պատասխան չեն ստացել։ Հայտնի սայաթնովագետ Մ. Հասրաթյանը ենթադրում է, թե նշված երգը կարող է պատկանել «Աշուղ Օղլան»-ին։ Նա միաժամանակ մտածելու առիթ է տալիս, որ նրա հեղինակը կարող է նաև ինքը՝ Սայաթ-Նովան լինել։ Ահա Մ. Հասրաթյանի համապատասխան տողերը. «Կարելի է ենթադրել, որ... «Բլրուլն նստած է վարթին, լավ կանչեր նա վարթի համա» վերնագիրը (այսինքն առաջին տողը) կրող խաղը ոչ թե Սայաթ-Նովայինն է, ինչպես երևում է լեզվից, այլ մի ուրիշ երգչին, գուցե հենց Աշուղ Օղլանին»¹։ Ինչպես տեսնում ենք, Մ. Հասրաթյանը փաստեր չի ունեցել ենթադրյալ «Աշուղ Օղլանի» մասին իր հայտնած կարծիքն ապացուցելու, իսկ Սայաթ-Նովայի վերաբերյալ ծագած միտքն էլ, իրավամբ, անընդունելի է համարել։

Բարեբախտարար, ձեռագիր և տպագիր աղբյուրներում պահպանված ենք գտնում «Բլրուլն նստած...» երգի երկու ընդօրինակություն, որոնք գալիս են սպառիչ պատասխան տալու քննընդհանուր հարցին։ Դրանցից մեկը գտնվում է Մատենադարանի № 6998 ձեռագրում (թերթ՝ 90ր—

¹ «Սայաթ-Նովա», Երևան, 1959, էջ 218։

91ա, ժամանակը՝ ԱԼՔ դարի առաջին կես), իսկ երկրորդը տպագրված է Մ. Միանսարյանի «Քնար հայկական» ժողովածուի մեջ²։ Ձեռագիր օրինակը բաղկացած է 5 տնից, տպագրված 4. տների հաջորդականությունը տարրեր է, առկա են մի շարք տարբերակներ, տպագրի վերջին տնից պակասում է մի տող, այն դուրս է հեղինակի անունից և այլն։ Անհամեմատ ամբողջական տեսք ունի ձեռագիր օրինակը, որի մեջ և պահպանված է հեղինակի անունը՝ «Ջաֆարեան»։

Կեանքս քառամեկս լալով,

Վարդին հետ ալսչափ շուրջ զալով,

ՋԱՔԱՐԻՆՍՅ շրջէր ողբալով.

Վա՛յ կանչելով վարդի՛ն համար, վարդի՛ն համար:

Ինչպես երևում է, Ջաֆարիայի սույն երգը ժամանակին և հետագայում շատ սիրված հայկական միջնադարյան երգերից մեկն է եղել՝ տարածված հատկապես բանավոր ճանապարհով, որի պատճառով էլ նրա բնօրինակությունների մեջ առկա են զգալի տարբերություններ։ Հավանաբար, Սայաթ-Նովան ևս այդ երգին ծանոթացել է բանավոր աղբյուրներից, որովհետև նրա հիշատակած տողերում ևս կան նույն փոփոխություններ։ Համեմատելու համար ավելորդ չենք համարում մեջ բերել այդ երկու տողերը (որոնք տվյալ երգի կրկնակն են)՝ թե՛ Սայաթ-Նովայի հիշատակումից և թե՛ վերահիշյալ երկու աղբյուրներից.

Սայաթ-Նովայի մոտ.

Բիրունը նստած է վարքին,

Լավ կանչեր նա վարքի համա...

№ 6998 ձեռագրում.

Պիլիպիլն նստել էր տրամամ,

Վա՛յ կանչելով վարդի՛ն համար, [վարդի՛ն] համար...

«Քնար հայկական»-ում.

Պիլիպիլն նստել էր լալով,

Վա՛յ կանչելով վարդի՛ն համար, վարդի՛ն համար...

Դրանցից համեմատաբար ավելի աղավաղված է Սայաթ-Նովայի մոտ պահպանվածու Այդ-տեղ առաջին տողում առկա «վարթին» բառն ինքնըստինքյան մատնում է իր աղավաղման ալոգյունք լինելը, որովհետև երկրորդ տողում ևս կա «վարթ»-ը։ Այն երևի «տրտում» բառի աղավաղումն է։ Ավելի քան ակնբախ է երկրորդ տողի «լավ» բառի աղավաղված լինելը, որի պատճառով տողի միտքը, քերականական առումով, մշուշված է։ Ինչպես ցույց են տալիս մյուս օրինակները, այդ «լավ»-ը փոխարինել է «վայ» բառին։

Սայաթ-Նովայի մոտ, երկրորդ տողում կա նաև «նա» բառը, որով այն տարբերվում է մյուսներից։ Սակայն պիտի նկատել, որ ձեռագիր օրինակի որոշ տների կրկնակներում ևս կա այդ («նա») բառը։ Նկատված նաև տարբերություններից մեկն էլ այն է, որ Սայաթ-Նովայի մոտ «վարթի համա» դարձվածքը մեկ անգամ է նշված, մինչ, ըստ մյուսների, այն պիտի կրկնվեր։ Որ այս հարցում ավելի ճիշտ են մյուս օրինակները, դա երևում է նաև Սայաթ-Նովայի այն երկու երգերից, որոնք զրված են Ջաֆարիայի այդ երգի եղանակով։ Այդ երգերի մեջ Սայաթ-Նովան կրկնվող համապատասխան բառերն ոգտագործում է ոչ թե մեկական, այլ երկուական անգամ։ Այսպես. «յանա-յանա, յանա-յանա», «նստեղիմեն, նստեղիմեն», որոնք միանգամայն համապատասխանում են «Վարդին համար, վարդին համար»-ին՝ և՛ ձևով, և՛ տաղաչափությամբ։

Առանձին ուշադրության արժանի է այն հարցը, թե Սայաթ-Նովան ինչպե՛ս է օգտվել Ջաֆարիայի երգից։ Պարզվում է, որ նա, հիմնականում, օգտվել է իր նախորդի երգի տաղաչափությունից և տների կառուցվածքից։ Այսպես, երկու դեպքում էլ երգերի տները բաղկացած են չորսական տողերից, իսկ տողերը՝ 8-ական վանկերից։ Նկատելի է, սակայն, որ Սայաթ-Նովան մասամբ փոխել է կրկնակային տողերի տաղաչափությունն ու ձևը։ Եթե Ջաֆարիայի մոտ բոլոր դեպքերում կրկնակը նույն տեսքն ունի (Վա՛յ կանչելով վարդի՛ն համար, վարդի՛ն

² Մ. Միանսարյան, Քնար հայկական, Ս. Պետերբուրգ, 1868, էջ 469—470։

համար», ապա Սայաթ-Նովան խուսափել է այդ միօրինակությունից և կրկնվող տողի առաջին կեսը միշտ փոփոխել է և ներքին հանգավորմամբ ստեղծել ավելի հնչուն ու ավելի բովանդակային երգեր: Եվ եթե Ջաքարիայի մոտ կրկնակը իմաստային առումով տեղ-տեղ մասամբ կտրրվում է տվյալ տնից, ապա Սայաթ-Նովայի մոտ այն միշտ էլ տվյալ տան օրգանական մասն է կազմում: Բացի դրանից, Ջաքարիայի մոտ կրկնակը բաղկացած է 12 վանկից և հատածային 3 միավորից, Սայաթ-Նովայի մոտ՝ 15 վանկից և հատածային 4 միավորից: Իսկ դա նշանակում է, որ Սայաթ-Նովան ոչ միայն ստեղծագործաբար է օգտվել Ջաքարիայի երգի տաղաչափությունից, այլև երաժշտությունից—եղանակից: Ինչ վերաբերում է բովանդակությանը, ապա նրանք միանգամայն ուրույն սիրո և րդեր են՝ Ջաքարիայինը՝ ասված վարդի անունից, իսկ Սայաթ-Նովայինը՝ իր, հեղինակի: Առհասարակ պիտի ասել, որ այստեղ մեծ երգիչը, ելակետ ունենալով Ջաքարիայի նշված երդր, տվել է բոլորովին նոր ու ավելի բարձրարժեք ստեղծագործություններ:

Արդ, թե ո՞վ է Ջաքարիա երգիչը: լրացուցիչ տեղեկություններ չունենք: Իստեկով նրա երգի լեզվից և ընդհանուր ոգուց, կարելի է ենթադրել, որ նա Նաղաշ Հովնաթանի ժամանակակիցներից մեկն է եղել՝ ապրած XVII—XVIII դարերում: Ինչ վերաբերում է նրա տաղին, ապա այն մեր միջնադարյան պոեզիայի ընտիր նմուշներից մեկն է՝ նվիրված վարդի և սոխակի մոտիվին, գրված խոսակցական լեզվով, բարձր արվեստով, չերմ շնչով և ամբողջական աշխարհիկ ողով: Եվ քանի որ այդ գողտրիկ երգը առիթ է հանդիսացել, որպեսզի Սայաթ-Նովան նրա «ձենով» ստեղծի իր երկու ընտիր երգերը, ուստի հարկ ենք համարում ստորև ներկայացնել նրա յնագիրը՝ կազմված վերոհիշյալ երկու աղբյուրների հիման վրա:

ՏԱՂ ՊԻԻԼՊԻԻԼԻ

Պիլպիլն նստել էր տրտում,
Վա՛յ կանչելով վարդի՛ն համար, վարդի՛ն համար:
Սա՛ր և ծո՛ր պոպիկ էր շրջում,
Վա՛յ կանչելով վարդի՛ն համար, վարդի՛ն համար:

Պաղի սնույուն բացուեցաւ,
Պիլպիլին աշին քացուեցաւ,
Աւրին—աւտասուօ՛ք լցուեցաւ,
Վա՛ւ կանչելով վարդի՛ն համար, վարդի՛ն համար:

Ինճն լայր, ինճն վայ կանչեւ,
Մանուշակ ծաղկին աղաչեւ,
Խոնարհեւ, ոտքն պաչեւ,
Վա՛յ կանչելով վարդի՛ն համար, վարդի՛ն համար:

Շատ աղաչեւ Եասամանին,
—Մէկ խապար չունե՛ս դուն իմ խանկն,
Ղուրպան լինիմ նորա քանին,
Վա՛ւ կանչելով վարդի՛ն համար, վարդի՛ն համար:

Կեանքս քառամեցաւ լալով,
Վարդին հետ այսչափ շուրջ գալով,
Չափաւեայ շրջէր ողբալով,
Վա՛ւ կոնչելով վարդի՛ն համար, վարդի՛ն համար:

2. ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՆ ԵՎ ՍԱՅԱԿ-ՈՂԱՆԻ

Մեծ է եղել Սայաթ-Նովայի հմայքը ոչ միայն իր ժամանակակիցների, այլև հաջորդների համար: Այդ հմայքի գործությամբ էր, որ նրան հետևեց երգիչների մի ամբողջ բանակ: Վերջինս ներս կա՛մ ստեղծագործում էին Սայաթ-Նովայի նման, կա՛մ տարածում էին նրա երգերը, կա՛մ էլ ծառայում էին այդ երկու նպատակին հավասարապես: Այս տեսակետից առանձին հետաքրքրություն է ներկայացնում Սայաթ-Նովայի և Սայադ-Օղլանի առնչության հարցը: Պարզվում է, որ Սայադ-Օղլանը, ինչպես և նրա նախորդները, այնքան շատ են սիրել Սայաթ-

Նովային, այնքան շատ են զրազվել նրա երգերի տարածմամբ, որ ի վերջո նրանց տոհմը համարվել է Սայաթ-Նովյանց տոհմ՝ սերած Սայաթ-Նովայից: Այդ թյուրիմացությունը մինչև օրս էլ բանասիրության մեջ համարվում է ճշմարտություն և սպասում յուր ճշգրտմանը:

Վերոհիշյալ թյուրիմացության առաջին արտահայտությունը հանդիպում ենք Գ. Պատկանյանի «Արարատ» պարբերականի 1851 թվականի հատորում: Այդտեղ Գ. Պատկանյանը գրում է. «Սայաթ-Նովյանց տանեն հարյուր տարի են ավելի է, որ բանաստեղծական հոգին երբեք պակասած չէ... Գոնե այժմ մեր ժամանակումն հրեում է, որ դեռարույս բանաստեղծ այն հրեի մեծանուն Սայաթ-Նով բանաստեղծի թոռնյայն, Հովհաննես Մկրտչյան Սայաթ-Նովյանց կամ Սայադյանց...»³ Իսկ, ինչպես հայտնի է, և ինչպես կտեսնենք ստորև, հենց այդ «Հովհաննես Մկրտչյան Սայաթ-Նովյանց կամ Սայադյանց»-ը ոչ այլ ոք է, քան ինքը՝ երգիչ Սայադ-Օղլանը, կամ Սայադ-Օղլին, որը երբեմն էլ ստորագրել է ուղղակի «Սայաթ-Նով» ձևով:

Հետագայում, հայտնի սայաթնովյան Գ. Լևոնյանը, կազմելով Սայաթ-Նովայի տոհմա-կան ճյուղագրության սխեման, նկատի առնելով նաև Գ. Պատկանյանի վերոհիշյալ տեղեկությունը, Սայաթ-Նովայի ժառանգների շարքն է անցկացնում նաև Սայադ-Օղլանին և նրա հորը՝ Մկրտչին՝ որպես Սայաթ-Նովայի Օհան որդու հաջորդներ: Այդ սխեմայի կապակցությամբ «Սայադ-Օղլի» Հովհաննեսի մասին նա տալիս է հետևյալ սեղմ ծանոթությունը. «Գրական-հասարակական գործիչ անցյալ դարի 60-ականներում. ապրում էր Աստրախանում. գործակալ «Հյուսիսափայլ» և «Ճոռաղ» ամսագրերի, աշխատակից «Կոունկի»⁴:

Այս կարծիքը ուժի մեջ է նաև այսօր: Վերջերս «Երևան» օրաթերթում (1963, հունիս 11) Հայկ Խաչատրյանի «Սայաթ-Նովայի տոհմածառը» խորագրով հոդվածաշարքում ավելի քան ընդարձակ խոսք ասվեց այդ մասին: Կարելի է հիշել նաև «Էջմիածին» ամսագրի 1960 թվականի Ը հատորում զետեղված պրոֆ.-դոկտոր Լ. Մելիքսև-Բեկի ուսումնասիրությունը, որտեղ միա-ժամանակ տրված է մատենագիտական ցանկ՝ Հովհաննես Սայաթնովյանցի մասին խոսող ուրիշ հեղինակների և նրանց աշխատությունների վերաբերյալ:

Հավաստի փաստերը ցույց են տալիս, որ ո՛չ Սայադ-Օղլանը և ո՛չ էլ նրա հայր Մկրտիչը Սայաթ-Նովայի հետ արյունակցական ո՛չ մի կապ չունեն: Այս առումով պահպանված ամենագործ փաստը հենց իր՝ Սայադ-Օղլանի մի բանաստեղծությունն է, որի սկզբի երեք տների մեջ նա տվել է իր ամփոփ կենսագրությունը: Այդ բանաստեղծությունը տպագրված է «Մեղու Հայաստանի» պարբերականի 1858 թվականի հատորում: Նրանից առաջ զետեղված է հայտնի բանաստեղծ Սեյիադի մի ոտանավորը, որին և պատասխանել է Սայադ-Օղլանն՝ իր մատնա-նշված բանաստեղծությամբ: Սեյիադի բանաստեղծության մեջ արծարծված է այն միտքը, թե ինքը շատ զեղեցիկ և ճշմարտախոս երգեր է գրել, սակայն ճիշտ չի գնահատվել: Նրա սկզբի տունը հետևյալն է, որով Սեյիադը վրդովված րացականում է.

Ով որ ունի ինձ նման պատրաստ պատասխան՝ դուրս գա, դուրս,
Քաղցրախոս, ձիծաղերես, բառն գառնչուն՝ դուրս գա, դուրս,
Բանաստեղծության պատվին տիրելու արժան՝ դուրս գա, դուրս,
Բարեգործ, առանց քաման, ազգասեր իշխան՝ դուրս գա, դուրս,
Այնիս չի գալ, որ հազար Ֆիրդուսի խաղան՝ դուրս գա, դուրս...⁵:

Սեյիադի այս գրգռող բանաստեղծությունն ահա «դուրս» է հանում իր դեմ Սայադ-Օղլանը: Այս առիթով Սայադ-Օղլանն անհրաժեշտ է համարում տալ նաև իր կենսագրությունից որոշ տեղեկություններ, որպեսզի Սեյիադը, նրա մականվան պատճառով, չկարծի, թե գործ ունի իր ազգակցի հետ: Քանի որ այդ պատասխանի սկզբի երեք տները գալիս են մի կողմից՝ պարզելու Սայադ-Օղլանի ծագումը, իսկ մյուս կողմից՝ լուծելու նրա և Սայաթ-Նովայի միջև սխալմամբ նկատված ազգակցական կապի հարցը, հարկ ենք համարում այստեղ բերել այդ երեք տները.

ՊԱՏԱՍԽԱՆԻ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԵ

Ականջ դիր, պարոն Սեյիադ, խաղիկ պատասխան դուրս եկավ,
Ըստ որում դու կանչում ես, քե որ կա արժան՝ դուրս եկավ,
Մականվամբ Սայադ-Օղլի, ինքն Հաչոաբխան դուրս եկավ,

³ «Արարատ», 1851, էջ 357—359:

⁴ Գ. Լևոնյան, Սայաթ-Նովա, Երևան, 1931, էջ 20: Տե՛ս նաև էջ 43:

⁵ «Մեղու Հայաստանի», 1858, էջ 123:

⁶ «Սայաթ-Նովայ» ձևով այստեղ նորից հիշատակված է նույն Սայադ-Օղլանը:

Հովհաննես Մկրտիչյան, ազդե Արզանյան դուրս եկավ,
Մականունն լսելով՝ շատես ազգական դուրս եկավ,
Հոգվով քնսկտ բարեկամ, բայց օտարական դուրս եկավ,
Թե կամիս՝ այս անունն ասեմ, ո՛ր տեղան դուրս եկավ:

Պապն իմ Փարակեցի Հովհաննես Ավետիսյանն,
Ազդի անվամբ Արզանյանց, դալիս ա մեր Հաշտաբխանն,
Թիֆլիզու Սայար-Նովու խաղերն ասելով տանն,
Բարեկամքն Սայար-Նով հավելուն վերա անվանն,
Որ և հայրն իմ Մկրտիչ անվամբ՝ Սայադյան դուրս եկավ:

Ետ նորա նվաստս, ազդիս բնությունն Բաշելով,
Մեր տվեցիմ խաղերի՝ մանկական սիրտս տաշելով,
Ի միջի առևտրույս միտմս Լտոնում մաշելով,
Բազում Երգ հորինեցի՝ վերջում անունս հիշելով,
Ներքեմն Սայադ-Օղլի, մերթ Սայեադ-Օղլուն դուրս եկավ...

Այստեղից տեսնում ենք, որ Աստրախան տեղափոխված փարակեցի Հովհաննես Ավետիսյան-Արզանյանն այնքան շատ է սիրում երգել Սայաթ-Նովայի խաղերը, որ նրան մականվանում են Սայաթ-Նովա: Այդ պատճառով էլ նրա՝ այդ Հովհաննեսի Մկրտիչ որդին կոչվում է Մկրտիչ Սայադյան: Վերջինիս զավակն էլ, որ կրելիս է եղել պապի անունը (Հովհաննես), իր ազգի բնությանը քաշելով, այսինքն՝ երգեր երգելով և նոր երգեր հորինելով, իրեն կոչում է մերթ Սայադ-Օղլի, մերթ Սայեադ-Օղլան: Մերթ էլ ուղղակի «Սայաթ-Նովա» Պարզ է, որ այս տոհմը ազգակցական որևէ կապ չունի Սայաթ-Նովայի գերդաստանի հետ:

Այստեղ հետաքրքրական է նաև մի ուրիշ հանգամանք: Մոտավոր հաշիվներով պիտի ընդունել, որ փարակեցի Հովհաննես Ավետիսյան-Արզանյանը ծնված պիտի լիներ 1858 թվականից շուրջ 100 տարի առաջ, այն է 1750-ական թվականներին, երբ Սայաթ-Նովան դեռ պալատական երգիչ էր: Հետևապես նա, որպես երգերի և հատկապես Սայաթ-Նովայի երգերի սիրահար և հաջող կատարող, Սայաթ-Նովայի երգերը կարող էր սովորած լինել 17-0-ական թվականներին, դարձյալ երգչի կենդանության տարիներին: Կնշանակի, նա եղել է Սայաթ-Նովայի երգերի կենդանի սկզբնաղբյուրներից մեկը, որը հավանաբար ունեցել է նաև համապատասխան երգարան: Այս հոդի վրա ծագում են մի շարք հետաքրքրական հարցեր, որոնք սակայն առայժմ մնում են անպատասխան:

Ահա երգիչների մի ամբողջ տոհմ, ժառանգական երեք սերունդ (գուցե և ավելի), որը, մեծանուն Սայաթ-Նովայի հրգերի հզոր հմայքով, տարերայնորեն որդեգրվել է նրա գերդաստանին՝ ստեղծելով մի գեղեցիկ թյուրիմացություն, որի բացահայտումն անգամ առավել ուժեղ թելերով է նրանց կապում միմյանց հետ:

Ա. ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ

ԿՆՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հայկական միջնադարյան ձեռագրերում հայտնի են բազմաթիվ մանրանկարներ, որոնցում պատկերված են զանազան կենդանիներ ու թռչուններ: Դրանք գրաֆիկ բնույթի վավերագրեր են, որոնք որոշ չափով օգնում են կենդանաբանական-պատմական մի շարք հարցերի լուսարանմանը: Ուսումնասիրելով Մաշտոցի անվան Մուտենադարանի մի շարք ձեռագրերը, առանձին ուշադրությամբ զննեցինք և ընդհանուր պծերով արտանկարեցինք մի շարք կենդանաբանական ուշագրավ մանրանկարներ: Դրանք մեծ մասամբ հանդիպում են ձեռագրերի աջ կամ ձախ լուսանցքներում, երբեմն որպես գլխազարդանկարներ: Վերջին դեպքում մանրանկարները մեծ մասամբ գունավոր են: Մանրանկարների մեջ կան կատարյալ ռեսուիստական նմուշներ, բայց հաճախ որոշ շեղումներով բնօրինակից, որոնք, սակայն, չեն խանգարում ճանաչելու ռեալ կենդանուն:

Մեր ուսումնասիրած մանրանկարները ձեռագրի բովանդակության հետ ամենևին կապ չունեն, պատահական բնույթի են: Ուշագրավն այն է, որ վերարտադրված են մեծ մասամբ


Հայաստանի կենդանիները Այդ մանրանկարները հետաքրքրական են երկու տեսակետից. մի կողմից պատկերանում են Հայաստանի կենդանական աշխարհի տարածված օրյկտները, գաղափար են տալիս Հայաստանում հանդիպող կենդանիների մասին, մյուս կողմից՝ հավանական է դառնում այն ենթադրությունը, որ Հայաստանում եղել են մարդիկ, որոնք սիրել են ընդթյունը, ուսումնասիրել կենդանական աշխարհը ոչ միայն այս կամ այն աշխատությունների օգնությամբ, գրքերից կամ ուրիշ ձեռագրերից էն ծանոթացել կենդանիներին, այլև իրենք տեսել, դիտել են, ուսումնասիրել նրանց իրենց բնական շրջապատում, կյանքի, վարքի տարրեր մոմենտներում։ Այդ երևում է, մանավանդ, դինամիկ բնույթի մանրանկարներից, որտեղ օբյեկտները պատկերված են որևէ կենսական գործողության մեջ՝ պայքարում, սնունդ հայթայթելիս և այլն։

Որոշ մանրանկարներ երբեմն նկատվում են մանրանկարներում ունեն դիտված օրյկտին։ Կան այնպիսիներ, որոնք մանրանկարչի երևակայության ազդեցության տակ, նրա գեղարվեստական ճաշակի թելադրանքով գեղեցկացված, գունավորված են գույների պատահական համադրությամբ, երբեմն էլ ոճավորված են շատ բարդ և գունավոր զարդերով։ Մանրանկարների մեջ կան նաև այնպիսիներ, որոնք կատարված են հմուտ նկարչի ձեռքով, տեխնիկական լիովին զրազետ և բնական գունավորությամբ։ Դեղարվեստորեն և ճիշտ նկարված մանրանկարներն այնքան ցայտուն և պատկերավոր են, որ անմիջապես ճանաչվում է Հայաստանի կենդանական աշխարհի ունի ներկայացուցիչը։ Սթե որևէ գրավոր վավերագրում նշանակվում է այս կամ այն կենդանին, ընթերցողը կարողանում է իմանում կենդանու նկարագիրը, իսկ մանրանկարը բնական տեսքով ցույց է տալիս կենդանու կերպարը։ Քանի որ մեր ուսումնասիրած մանրանկարների ճնշող մեծամասնությունը պատկերում է Հայաստանի կենդանիներին, ապա ուրեմն, կարող է որոշ չափով աղբյուր հանդիսանալ Հայաստանի կենդանական աշխարհի ճանաչողության համար։

Կանգ առնենք այժմ մի քանի կոնկրետ օրյկտների ընդթյունի վրա, ընտրելով ամենաընդուն և ցայտուն օրինակները։ Ամենից առաջ աչքի են ընկնում նկարիչներ Ռուսիյի (XIII դ. Ավետարան, 1287, Կիլիկիա), ապա Գասպար Որեցի (XVII դ., Նոր Զուղա, 1660) մանրանկարները։ Ռուսիյի նկարները օժտված են բարձր նկարչական տեխնիկայով, ճշտորեն վերարտադրված է կենդանու կերպարը, գունավորումը վառ և կայուն է, լավ պահպանված։ Մշտոցի անվան Մատենադարանի № 349 ձեռագրում (10, 13, 268 էջերում) նկարված են լճի եզրերում, վայրի բաղ և վայրի այծ, որոնցից վերջինը շատ ընդուն է և նման է № 7347 ձեռագրում (6, 7, 8, 10, 16 էջերում) իսկույն ճանաչվում են ալկիոնը, աղավնին, սուրբանական հավը, առազիլը։ Տարբեր ձեռագրերում նկարված են կաշտակ, կախված։ Վերջինն ըստ երևույթին Հայաստանում ամենասիրված և տարածված թռչունն է եղել, այդ է պատճառով, որ նա հաճախ է հանդիպում մանրանկարներում։ № 189 ձեռագրում նկարված են զույգ առջ (էջ 44), գիշատիչ թռչուն ցինը՝ անհանգիստ վիճակում (էջ 516), շատ ընդուն է դեղնավուն գունավորությամբ անտառանակ թռչուն պիոլը (էջ 471), բուն, ապա 1700 թ. ձեռագրում՝ երկու փայտփուր։ Մի շարք այլ ձեռագրերում հանդիպում են Հայաստանի կենդանական աշխարհի այլ ներկայացուցիչներ՝ առջ, քալ, ընձառյուծ, ջեյրան, վայրի այծ, վայրի ոչխար, նապաստակ, այծյամ։ Թռչունների նկարներն ավելի հաճախ են հանդիպում. օրինակ՝ առազիլ, տառեղ (մեծ ու փոքր), առուս, ներկառու, ալկիոն, խաղտրտեղիկ, ազոավ, առժիվ և ուրիշներ, սողուններից՝ ոձ, անոտ մողես՝ դեղնավորիկ։

Մեր ուշադրությունն առանձնապես գրավել են այն մանրանկարները, որոնք պատկերում են կենդանուն որոշ գործողության մեջ, դինամիկ բնույթ ունեն։ Ահա երկարտոտ ու երկարակտուց տառեղը, որ իսկույն ճանաչվում է, մանավանդ գլխի վրայի դեպի ետ ձգված ընդուն փետրափնջով. տառեղը գլուխը վեր ձգած կուլ է տալիս որսած ձուկը (ձեռ. № 352, էջ 431), Ահա գիշատիչ գայլը (ձեռ. № 189, էջ 464), որը մարմինը կծկել է և պատրաստվում է քնելու։ Նույն տեղում նկարված է եղջերուն այնպիսի տեսքով, կարծես խուսափում է ինչ-որ թշնամուց կամ էլ պատրաստվում է հանգստանալու։ Նույն ձեռագրում (էջ 465) պատկերված է փոքր տեսակի տառեղը՝ կտուցը բաց, առաջ քայլվածքով, ըստ երևույթին շտապում է դեպի նկատված որսը։ Ահա երկու փայտփուր մագցում են ծառի ընդ, միջատներ որոնում ճեղքերում (էջ 466)։

Նկարչական բարձր տեխնիկայով պատկերված է խիստ ուշագրավ մի մանրանկար՝ այծյամի և ընձառյուծի պայքարը (էջ 470). ընձառյուծն արդեն իր ժանիքները խրել է այծյամի կուրծքը, հեծել նրա վրա իր մարմնի ամբողջ ծանրությամբ. այծյամի մարմնի անօգնական դիրքն այնքան վարպետորեն և ցայտուն է պատկերված, որ զգացվում է այծյամի անհուսալի



Մանրանկարների նմուշներ

1. Արագիլի և օձի մարտը, 2. Կաչաղակ, 3. Կաքավ, 4. Տառեղը ձուկ է կուլ տալիս, 5. Զեյրան, 6. Եղջերու, 7. Գայլ, 8. Ընձառյուծը հարձակվել է այծյամի վրա, 9. Խաղտրտնիկ, 10. Ալկիոն, 11. Բագե:

վիճակը և անխուսափելի վախճանը: Երկու կենդանիներն էլ բնորոշ են Հայաստանի կենդանական աշխարհի համար: Գույները համարյա բնական են: Նման էպիզոդ պատկերված է № 7623 ձեռագրում (1655 թ., Կաֆա). այս անգամ արծիվն է հարձակվել նապաստակի վրա, սակայն եթե արծվի գունավորումը քիչ թե շատ մոտ է բնականին, նապաստակին անրնայան է, պատահական (կապտավուն): Այնուամենայնիվ, երկու կենդանիների գիրքն էլ՝ հարձակվողի և պաշտպանվողի, արտահայտված է ճիշտ: 1318 թ. № 206 ձեռագրում (նկարիչներ Ստեփանոս և Օհան) պատկերված է արագիլի և օձի մենամարտը. արագիլն օձին կտուցի մեջ է առել երկու տեղից, ամուր սեղմել այնպես, որ օձը շնչասպառ բացել է բերանը: Օձի գիրքը, մարմնի գալարումները բնական տեսք են տալիս կատաղի մարտին: Կենդանիների գունավորումը ռեալ է, միայն օձի գլուխը դիտողը լավ չի պատկերել, կամ էլ ցանկացել է ավելի ահեղ դուրս բերել, նմանեցնելով առասպելական վիշապի գլխին:

Շատ հետաքրքրական է XVI դարի մի ձեռագրում (№ 8924) նկարված Հայաստանում տարածված ջեյրանը՝ վագրի մոմենտին: Նկարի շուրջը ոճավորված շրջանակ է գծագրված տերևներից, իսկ ամենահետաքրքրականն այն է, որ կենդանու տակ տառերով գրված է «ջեյրան»: Սա մեր ուսումնասիրված մանրանկարների միակ օրինակն է, երբ մակագրված է կենդանու անունը:

Բերված օրինակներով չեն սահմանափակվում բազմաթիվ ձեռագրերում եղած կենդանիների մանրանկարները: Ոչ միայն կրոնական գրքեր են նկարագրողված Հայաստանի կենդանական աշխարհի տարածված տեսակներով, այլև որոշ տաղարաններում են հանդիպում կենդանական մանրանկարներ: Այդ երևում է Արշակ Չոպանյանի ֆրանսերեն թարգմանած տաղարանների ժողովածուներից: Մանրանկարների մեջ գերակշռում են բազմատեսակ ճնճղուկազգի երգող թռչունները, որոնցով հարուստ է Հայաստանը: Ավելի սակավ հանդիպում են դարձյալ կաթավը, արագիլը (մեկը՝ օձ որսալիս), փոքրիկ բվեր, քաղեններ: Կաթնասունները շատ քիչ են ներկայացված, բայց աչքի են ընկնում Հայաստանում տարածված վայրի այծը և վայրի ոչխարը: Դրանք երկուսն էլ դիմամիկ վիճակում են, այծը՝ վագրի մոմենտին, ոչխարը՝ նստած, գլուխը վեր ձգած: Նկարիչը ոչխարի բերանին գրել է ոճավորված օղակ: Այծը և ոչխարը պատկերված են իրենց բնորոշ եղջյուրներով, այնպես, որ իսկույն ճանաչվում են:

Մանրանկարների մեջ հազվագյուտ են այն կենդանական օբյեկտները, որոնք բնորոշ չեն Հայաստանի համար, բայց օտար երկրներից բերվելով Հայաստան՝ որպես հազվագյուտ շրինակներ պահվում էին իշխանների կալվածքներում՝ բուսաբանական այգիներում (աբուրաստաններում): Դրանցից է, օրինակ, Հնդկաչիների (Հարավային Ասիա) բերված սիւրամարգր, որի ոճավորված մանրանկարները հաճախ են հանդիպում ձեռագրերում: Չոպանյանի գրքում բերված խայտաճավների մանրանկարը վկայում է, որ Հայաստանում, ըստ երևույթին, պահվում, աճեցվում էին հավազգի խայտահավեր, որոնք Աֆրիկայի կենդանական աշխարհի բնորոշ ներկայացուցիչներ են: Այդ մանրանկարները ընդօրինակված են X դարի հնագույն ձեռագրից:

Մեր ուսումնասիրած մանրանկարները, կապ չունենալով ձեռագրերի բովանդակության հետ, ինչպես տեսանք, օժանդակում են Հայաստանի կենդանական աշխարհին ծանոթանալուն: Թնական տեսքով, հաճախ բնական գունավորությամբ, ճիշտ արտահայտված բնորոշ արտաքին հատկանիշներով այդ մանրանկարները պատկերում են Հայաստանի կենդանական աշխարհի տարածված ներկայացուցիչներին: Այդ մանրանկարները, ինչպես և ըստ ակադեմիկոս-կենդանաբան Պավլովսկու՝ ֆուկլորում արտացոլված որոշ կենդանաբանական գիտելիքները, կարող են լինել չգրված գիտության տարրեր:

Իհարկե, մեր բերած օրինակներով չի սպառվում կենդանական մանրանկարչության ուսումնասիրությունը. անհրաժեշտ է բացահայտել նոր փաստեր: Ակադեմիկոս Պավլովսկու առաջադրած դրույթը ժողովրդական բանահյուսության կենդանաբանական տարրերի ուսումնասիրության մասին պետք է ընդունելի համարել և այդ տեսանկյունով վերլուծել նաև հայկական բանահյուսության կենդանաբանական տարրերը:

Թ. ԳԱՐՐԻԵԼՅԱՆ:

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄՆԵՐԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Երևան քաղաքի տերիտորիան հարուստ է բազմապիսի հնագիտական հուշարձաններով: Դրանցից են Շենգավիթի էնեոլիթյան բազմաշերտ բնակատեղին, Մուխաննաթ-թափան, ուրարտական ամրոց Երեբունին (782 թ. մ. թ. ա.), որից սկսվում է այժմյան Երևանի պատմությունը, ուրարտական ամրոց և քաղաք Քելշեբաինին (VII դ. մ. թ. ա.), որի ստորին շերտերում հայտնաբերված է XIII դ. (մ. թ. ա.) բնակատեղի, Նոր-Արեշի ուրարտական դամբարանադաշտը (VIII դ. մ. թ. ա.) և այլն: Այդ բնակատեղիների և ամրոցների պեղումներով հայտնաբերվել են արժեքավոր նյութեր, որոնք վերաբերում են մ. թ. ա. IV—I հազարամյակներին: Հայտնաբերված նյութերը հիմնականում հրատարակված են¹, սակայն քաղաքի մյուս վայրերում ևս շինարարական աշխատանքների ընթացքում երևան են բերվել հնագիտական իրեր ու առարկաներ, որոնց հիմնական արժեքը արտահայտվում է նրանով, որ դրանք լրացնում են մեր պատկերացումները հին Երևանի պատմության մասին: Սույն հոդվածում ժամանակագրական սկզբունքով քննարկվում են Երևանում շինարարական աշխատանքների միջոցին ի հայտ բերված նյութական կուլտուրայի մնացորդները:

Երևանի վ. Զեյբուն (Կիլգա) քաղամասում հայտնաբերված է շագանակագույն մակերեսով մի գավաթ, գնդաձև իրանով, նեղ վզիկով, շուրթը կտրված (նկ. 1): Այս գավաթը հիշեցնում է Զարջարիսում գտնվածները², Զարջարիսի նյութերը, ինչպես և նշված գավաթը, ունեն էնեոլիթյան ժամանակաշրջանի տարրեր: Սակայն դրանք իրենց նրբերանգությամբ պատկանում են ավելի ուշ ժամանակաշրջանի, երբ վերանում է սուր հատակը, բռնակը կորցնում է իր շրջանաձև տեսքը, որը հիմք է տալիս տվյալ գավաթը վերագրելու էնեոլիթից վաղ բրոնզին անցման ժամանակաշրջանին: Դրանք թվագրում ենք մ. թ. ա. III հազ. վերջերով:

Ծիծեռնակաբերդի հավաքածուն բաղկացած է չորս կավե անոթներից: Առաջինը մուգ շագանակագույն, ուռուցիկ իրանով, փորրիկ, վերին մասը՝ կտրված շրթով և լայն դուրս ընկած հատակով գավաթ է, որի բարձրությունն է 9 սմ, վզի տրամագիծը՝ 9,5 սմ, իրանի տրամագիծը՝ 13 սմ (Հայաստանի պետական պատմական թանգարան—ՀՊԹ, 1036 (1), նկ. 2): Երկրորդը դարչնագույն, կլոր հատակով, վերևի մասում քիչ լայնացող իրանով գավաթ է: Իրանի վերին մասն ունի երկու զույգ կոնաձև ելուստներ: Բարձրությունը 10 սմ է, վզի տրամագիծը՝ 8 սմ (ՀՊԹ, 1036 (2), նկ. 3): Երրորդը կարմրավուն, լայնաբերան, լայն տափակ հատակով, վերևում նեղացող իրանով և դուրս ճկված ուղիղ շրթով սափոր է: Բարձրությունը 8 սմ է, վզի տրամագիծը՝ 6 սմ (ՀՊԹ, 1036 (3)): Չորրորդը կարմրավուն, իրանի վերևի մասում նեղացող, ուղիղ կտրված շրթով գավաթ է, որը ստորին մասում խիստ նեղանում է, և ունի փորրիկ, տափակ հատակ: Բարձրությունը 7 սմ է, վզի տրամագիծը՝ 6 սմ, իրանի լայնությունը՝ 7 սմ (ՀՊԹ, 1036 (7)): Այս հավաքածուն թվագրող միակ իրը վերը նկարագրած առաջին գավաթն է, որն իր ձևով հիշեցնում է 1948 թ. Կիրովականում հայտնաբերված, մ. թ. ա. II հազ. կես-

¹ Е. Б а й б у р т я н, Культовый очаг из раскопок Шенгавитского городища в 1936—1937 гг., ВДИ, в. 4(5), 1938.

Б. Б. П и о т р о в с к и й, Археология Закавказья, т. 32, նույնի՝ Поселения медного века в Армении, «Сов. Археология», № XI, էջ 171:

Б. А. К у ф т и н, Археологические раскопки в Триалети, էջ 112:

Б. Б. П и о т р о в с к и й, Археология Закавказья, էջ 141:

К. Л. О г а н е с я н, Арин-берд, Մ. Ա. Ի ս ր ա յ ե լ յ ա ն, Ուրարտական երկու նոր արձանագրություններ, ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1951, № 8, էջ 89—98, նույնի, Արինբերդի Սուսի տաճարը և նրա արձանագրությունները, «Տեղեկագիր», 1957, № 9, էջ 93—104, նույնի՝ Ուրարտագիտական դիտողություններ, «Պատմա-բանասիրական հանդես», № 2, 1958, էջ 204—208, Երկու արժաթե դրամ Արինբերդից, «Սովետական Հայաստան» (ամսագիր), 1957, № 9:


И. М. Л о с е в а, Новые археологические исследования отряда ГМИИ им. А. С. Пушкина на холме Аринберд, «Сов. Археология», 1958, էջ 184:

Н. В. А р у т ю н я н, К датировке основания города Еревана, «Историко-филологический журнал» АН АрмССР, 1959, № 2—3, էջ 78:

Б. Б. П и о т р о в с к и й, Кармир-блур, вып. I—III, К. Л. О г а н е с я н, Кармир-блур, вып. IV, А. А. М а р т и р о с я н, Город Тейшебаини, Ереван, 1961.

² Ն. Հ. Մնացականյանի պեղումները (նյութերը չեն հրատարակված):

սերով թվագրվող ոսկե թասը՝ Այդ տիպի անոթներ հայտնի են նաև Լճաշենից. դրանք հնարավորություններ են բնական թվագրելու Միծեռնակաբերդում հայտնաբերված խեցեղենը:



Երևանի հնագիտական վայրեր

1. Շենգավիթ, 2. Ավան, 3. Կիրզա, 4. Մուխաննաթ-թափա, 5. Միծեռնակաբերդ, 6. Ռևտինա-տեխնիկական իրերի գործարան, 7. Կարմիր-բլուր, 8. Արարատ տրեստի գինու կոմբինատ, 9. Ջերմինսկու անվան գործարան, 10. Չարբախ, 11. Արովյան փողոց, 12. «Սասունցի Դավիթ» կինո-թատրոն, 13. Արին-բերդ, 14. Նոր-Արեշ, 15. Մալաթիա, 16. Հովհաննես Թումանյանի տուն-թանգարան, 17. Բուսարանական այգի, 18. Արտաշատի խճուղի, 19. Կալինինի փողոց:

Երևանի ռևտինատեխնիկական իրերի (նախկին կարբիդի) գործարանի կառուցման ժամանակ հայտնաբերվել են սև, փայլեցրած, անկանթ երկու սափոր, ուռուցիկ իրանով, կարճ վզով և դուրս ճկված շրթով: Նրանցից մեկի հատակը նեղ է, տափակ, վիզը զարդարված է մի քանի ուղղահայաց գծերով, որոնք կատարված են փայլեցման եղանակով: Իրանի վրա կան երկու շարք ներս ճկված հորիզոնական գծեր: Դրանց միջև եղած տարածությունը զարդարված է ուղղահայաց կոր գծերով, որոնք նույնպես կատարված են փայլեցման եղանակով: Բարձրությունը 18 սմ է, վզի տրամագիծը՝ 10,5 սմ, իրանի տրամագիծը՝ 20 սմ (ՀՊԹ, 273, 1460, նկ. 4): Երկրորդ սափորը իր պատրաստման ձևով և զարդերով կրկնում է առաջինը:

³ Б. Б. Пиотровский, Археология Закавказья, Л., 1949, էջ 46—47:

Բարձրությունը՝ 22 սմ է, վզի տրամագիծը՝ 12 սմ, իրանի տրամագիծը՝ 27 սմ: Այս երկու սափորները նման են լճաշենի, Արթիկի և նրանց ժամանակակից այլ հուշարձանների խեցեղենին և թվագրվում են մ. թ. ա. XIV—XII դդ.:


Արտատեսակի տեսակի զինու կոմիտեի շինարարության ժամանակ, 1931 թ., հայտնաբերվել է տարբեր ժամանակաշրջանների երկու խմբի պատկանող խեցեղեն: Առաջին խմբին են պատկանում սև փայլեցված երկու սափոր, որոնցից առաջինը լայնավիզ է, կլորացած շրթով և լայնափոր իրանով: Իրանի վերին մասով ձգվում են յոթ շարք գծեր: Բարձրությունը 21 սմ է, վզի տրամագիծը՝ 23 սմ, հատակը փոքր, տափակ (ՀՊԹ, 529 (86)): Երկրորդ սափորի իրանը ուռուցիկ է և ներքևի մասում զգալիորեն լայնանում է: Իրանի վրա, վզի տակ, անցնում են երեք շարք հորիզոնական գծեր: Նույնանման վեց գծեր են անցնում իրանի կենտրոնական մասով: Բարձրությունը 22 սմ է, վզի տրամագիծը՝ 9 սմ, իրանինը՝ 25 սմ, հատակը լայն, տափակ (ՀՊԹ, 529 (97)): Երկրորդ խմբին են պատկանում սև փայլեցրած երեք խեցիներ: Սրանցից առաջինը լայնաբերան, միակուսյա սափորի բեկոր է, որի կանթն ունի ուղղահայաց կտրվածք, աստիճանաձև փոսիկներով: Իրանի վերին մասում ձգվում են երկու ուռուցիկ գծեր (ՀՊԹ, 529 (48), նկ. 5): Մյուս բեկորները շագանակագույն լայնաբերան տարբեր սափորների մնացորդներ են, որոնց շրթերը դուրս ճկված են և կրում են թեք գծեր: Ուռուցիկ իրանների վրայով անցնում են երկու շարք ալիքավոր գծեր, որոնց միջև եղած տարածությունը նույնպես լցված է գծային զարդանկարով (ՀՊԹ, 529 (107)): Առաջին խմբի խեցիները համընկնում են լճաշենում, Արթիկում, Գեղարոտում և Կամոյի շրջանում հայտնաբերված խեցեղենին ու թվագրվում մ. թ. ա. երկրորդ հազ. վերջերով: Երկրորդ խմբի խեցեղենի թվագրությունը ճշտվում է կանթի ձևով, որը լայն տարածում ունի մ. թ. ա. V—VI դդ., նրա լավագույն զուգահեռները հանդիպում են Խրսուանոցի, Արթիկի, Կարմիր-բլուրի, Դիլիջանի և այլ հավաքածուներում:

Ավանում 1926 թ. հայտնաբերված խեցեղենը բաղկացած է 9 անոթներից (ամրողջական և բեկորներ): 1. Անկանթ, սև փայլեցված, ուռուցիկ իրանով, թույլ նշմարելի վզով և ուժեղ արտահայտված կլոր շրթով սափոր: Հատակը լայն է, վզի տակով անցնում են սեղմված զիգզագ գծեր, իրանի վերին մասում երկու զուգահեռ ակոսիկներ: Բարձրությունը 23 սմ է, վզիկի տրամագիծը՝ 12 սմ, իրանինը՝ 27 սմ (ՀՊԹ, 267): 2. Սև փայլեցված, կլոր իրանով, ձգված վզիկով և լայն շրթով անկանթ սափոր: Հատակը նեղ, տափակ: Վզի ներքևի մասում անցնում է զիգզագաձև զարդ: Նույնանման զիգզագ է կրում իրանի վերին մասը: Բարձրությունը 19 սմ է, վզի տրամագիծը՝ 7 սմ, իրանինը՝ 18 սմ (ՀՊԹ, 268): 3. Մեծ, խոր քրեղան ուռուցիկ իրանով և փոված շրթով, որի տակով անցնում է վերևից պարուրվող զիգզագով գծային զարդանկար: Բարձրությունը 16 սմ է, տրամագիծը՝ 20,5 սմ (ՀՊԹ, 226, նկ. 6): 4. Ռոմբաձև սափորիկ կարճ վզով, դուրս ճկված շրթով: Իրանի վերին մասով ձգվում են ակոսիկներ: Բարձրությունը 9 սմ է, վզի տրամագիծը՝ 9 սմ, իրանինը՝ 14 սմ (ՀՊԹ, 270): 5. Մեծ, լայնաբերան սափոր կլոր, թևեր հետ փոված շրթով, իրանի ներքևի մասում նեղ: Նրբի տակով անցնում է վերևից զիգզագով և ակոսով եզրագծված գծային հորիզոնական զարդ, իսկ ներքևից՝ ակոսով (ՀՊԹ, 292 (5)): Այս նույն հավաքածուում գտնվում են չորս նույնանման տարբեր խեցանոթների բեկորներ (ՀՊԹ, 270, 292 (2, 3, 4)): Ավանի այս հավաքածուի նմուշները հիշեցնում են Արթիկի, Էլարի (ուշ շրջան), Ճամբարակի խեցեղենը և թվագրվում մ. թ. ա. II հազարամյակի վերջով: Ավանի հավաքածուում է գտնվում նաև վաղ ժամանակաշրջանի, առանց անցքի, կլոր կոթառով, տափակ կոր իրանով, կիսաշրջան բերանով քարե տապարը: Տապարը հատիկավոր բազալտից է, կոպիտ մշակում ունի: Բարձրությունը 21 սմ է, կոթառի բարձրությունը՝ 7 սմ, բերանի լայնությունը՝ 9 սմ (նկ. 7, ՀՊԹ): Այս տապարն իր ձևով տարբերվում է էնեոլիթյան հարթ, հղկած կացիներից: Սա հնարավորություն է տալիս պայմանականորեն վերջինս վերագրելու ուշ էնեոլիթի կամ վաղ էնեոլիթի ժամանակաշրջանին:

Սրեանի Ձերժինսկու անվան դազգահաշինական գործարանի տերիտորիայում 1960 թ. շինարարական աշխատանքների ժամանակ հայտնաբերվել են խոշոր, սև փայլեցրած, լայնաբերան 7 կավե սափորներ, որոնք իրենց ձևերով ու զարդերով նման են Ավանում գտնված վերը նկարագրված ամաններին և թվագրվում են մ. թ. ա. II հազ. վերջերով (վերջիններս պահպանվում են Երեանի քաղաքային թանգարանում, 1388 (1—7)):

Չարբախ քաղամասում հայտնաբերվել են չորս անոթ և մեկ նիզակ: 1. Լայնաբերան սև փայլեցված սափորի կեսը, կարճ վզով, դուրս ճկված շրթով, բունակը միջնամասում խիստ բեկված է, իսկ վերևի մասում ունի փոքրիկ ելուստ: Հատակը լայն է, իրանի վրայով անցնում է ակոսիկ, որից հեռանում են ուռուցիկ թեք ելուստներ: Բարձրությունը 15 սմ է, իրանի տրամագիծը՝ 12 սմ, իրանինը՝ 27 սմ:

մադիծը՝ 15 սմ (ՀՊԹ, 16 (11))։ 2. Ռոմբաձև սև փայլեցված սափոր, տափակ հատակով, կարճ ու նեղ վզիկով, դուրս ճկված շրթով։ Վիզը պարուրում են երկու հորիզոնական գծեր։ Նման դժեր անցնում են և իրանի վրայով։ Երկու գծերի միջև անցնում են կարճ, թևք, թևք նշմարվող ուռուցիկ ելուստներ։ Բարձրությունը 21 սմ է, իրանի տրամագիծը՝ 20 սմ, վզինը՝ 7,3 սմ (ՀՊԹ, 1612, նկ. 8)։ 3. Ռոմբաձև սափորիկ, փոքր դուրս ցցված շրթով, իրանի վրա կան բռնակի հետքեր, ձեռքի կոպիտ աշխատանք է։ Հատակը լայն, տափակ։ Բարձրությունը 8 սմ է, իրանի տրամագիծը՝ 8 սմ, վզինը՝ 5 սմ (ՀՊԹ, 1613)։ 4. Սև փայլեցված փոքրիկ տափակ հատակով քրեղան, ներս փոված շրթով, որն ունի խուլ կանթ։ Վերի մասով անցնում է հորիզոնական ակոսիկ։ Բարձրությունը 5,5 սմ է, տրամագիծը՝ 17 սմ (ՀՊԹ, 1614)։ Այս ամբողջ կոմպլեքսը թվագրվում է մ. թ. ա. I հազարամյակի առաջին քառորդով և ընդհանրության գծեր է դրսևորում Աստղածորի և Կարմիր-բլուրի քաղաքային տեղամասի կոմպլեքսի խեցեղենի հետ։ Նույն ժամանակին է վերաբերում և բրոնզե նիզակը, որն ունի կարճ, տերևաձև սայր և փողածև անցքավոր կոթ։ Նիզակի երկարությունը 16 սմ է, փողարերանի երկարությունը՝ 8,5 սմ, սայրի լայնությունը՝ 25 սմ։ Այսպիսի նիզակներ հայտնի են Աստղածորից, Գետարեկից, Մինգեչաուրից, Ումթավրոյից և այլ վայրերից⁴։



⁴ А. А. Ивановский, По Закавказью, МАК VI, табл. V; Т. Н. Чубинишвили, Древнейшие арх. памятники Мухета, табл. XVI; Г. М. Асланов, Р. М. Ваидов, Г. И. Ионе, Древний Мингечаур, табл. XV.

Արովյան փողոցի վրա, ակնարումական հիվանդանոցի կառուցման ժամանակ հայտնաբերվել է մի սակր, որի վերին մասը ջարդված է։ Պահպանված մասի բարձրությունը 6 սմ է, լայնությունը՝ 12 սմ։ Ելնելով սակրի չափերից, այն կարելի է թվադրել մ. թ. ա. II հազարամյակի վերջով (ՀՊԹ, 156)։

«Սասունցի Դավիթ» կինոթատրոնի շրջակայքում 1938 թ. նույնպես հայտնաբերվել են հնագիտական իրեր, որոնցից ուշագրավ են հետևյալները. 1. Սև փայլեցված, նեղ վզով, դուրս ճկված շրթով, կլոր ուռուցիկ իրանով, տափակ հատակով սափոր։ Բարձրությունը 12 սմ է, վզի տրամագիծը՝ 9 սմ, իրանինը՝ 15 սմ (ՀՊԹ, 114)։ 2. Փոքրիկ, սև փայլեցված միականթ սափոր, նեղ, կարճ վզով, դուրս ճկված շրթով, ուռուցիկ իրանով և տափակ հատակով։ Կանթն ունի միջանցիկ անցք։ Սափորը զարդարված է հորիզոնական գծերով։ Բարձրությունը 7 սմ է, վզի տրամագիծը՝ 6,5 սմ, իրանինը՝ 9 սմ (ՀՊԹ, 1452)։ 3. Սև փայլեցված, ուռուցիկ իրանով, հատակի մասում խիստ նեղ, երկար ու նեղ վզով, շուրթը դուրս ճկված ոչ մեծ սափոր, որի կենտրոնով անցնում են երկու հորիզոնական գծեր, որոնց ներքին տարածությունը զարդարված է սեղմած զիգզագներով։ Բարձրությունը 17 սմ է, վզի տրամագիծը՝ 8,5 սմ, իրանինը՝ 14,5 սմ (ՀՊԹ, 1623)։ 4. Գորշ, փայլեցված սափոր, վզիկը երկար, նեղ, դուրս ճկված շրթով։ Վզի հիմքում անցնում են երկու շարք սեղմած հորիզոնական գծեր, որոնց միջի տարածությունը զարդարված է փորագիր նախշով։ Նույնանման զարդ սնցնում է և իրանի միջին մասով։ Բարձրությունը 22 սմ է, վզի տրամագիծը՝ 8 սմ, իրանինը՝ 18 սմ (ՀՊԹ, 1622)։ Այս շորս անոթները թվագրվում են մ. թ. ա. II հազարամյակի վերջերով և համընկնում ուշ լճաշենի և Արթիկի նույնանման իրերին։ Այստեղ հայտնաբերվել են նաև բրոնզե մեկ գոտու մաս, երեք ապարանջաններ, որոնցից մեկը ամբողջական է, մյուսները՝ կտրված։ Այս ապարանջանները պատրաստված են հաստ բրոնզե լարից, որի ծայրերը վերջավորվում են բարձրաքանդակ օձի ղլխիկներով։ Օձի ընդգծված ականջները և բերանը հիշեցնում են առասպելական վիշապը։ Տրամագիծը 8,6 սմ է (ՀՊԹ, 1469—1470)։ Բրոնզե գոտու բեկորը պատրաստված է բարակ թիթեղից, որի վրա պահպանվել են հորիզոնական գծերից բաղկացած զարդանկարներ (ՀՊԹ, 1471)։ Պատահականորեն բացված դամբարանից հանված այս իրերը իրենց ձևով կրկնում են ուրարտական նմուշները և թվագրվում մ. թ. ա. VIII դարով։

Երևանի Նոր-Արեշ քաղաքում հայտնաբերված իրերից ուշագրավ են՝ 1. Ոչ մեծ, կարմիր փայլեցված պնակը, թեթև նկատելի բեկվող շրթով, հատակը դուրս ցցված, որի ծայրի մասում կա շրջանաձև դրոշմ։ Բարձրությունը 4 սմ է, տրամագիծը՝ 15 սմ։ Վերջինս ձևով մոտ է ուրարտական անոթներին, բայց տարբերվում է նրանցից թույլ փայլով, թվագրվում է մ. թ. ա. VIII—VII դդ. (ՀՊԹ, 1482, նկ. 9)։ 2. Շրջանաձև, հարթ հղկված, թվով վեց, շաղափված միակողմանի աղաթն ուլունքներ։ Տրամագիծը՝ 0,8 սմ, 1,9 սմ։ Երկու տակառաձև միակողմանի շաղափված, հարթ հղկված ուլունքներ, կողքերը ուղիղ կտրված ու հարթ փայլեցված։ Վերջիններս կրկնում են ուրարտականը և թվագրվում VIII—VII դդ. մ. թ. ա.։ 3. Բրոնզե շրջանաձև բոժոժ, եռանկյունի կտրվածքներով։ Վերին մասում ունի օղակ կախելու համար (ՀՊԹ, 1484)։ Նման առարկաներ հաճախ են հանդիպում Հայաստանի և Անդրկովկասի II հազարամյակի հուշարձաններում։

Քաղաքի Մալաթիա քաղաքում հայտնաբերված հնագիտական իրերի մեջ պահպանվել են ուրարտական անոթների շորս բեկորներ, կարմիր փայլեցված երկու պնակների բեկորներ, որոնցից մեկի հատակին պահպանվել են երկու հիբրոգլիֆ նշաններ, ինչպես և երկու կարմիր փայլեցված տարբեր սափորների շրթերի մասեր։ Նշված հավաքածուն թվագրվում է Երեբունի և Թեյշեբաինի ուրարտական ամրոցներից հայտնաբերված նյութերի ժամանակով, այսինքն՝ մ. թ. ա. VIII—VII դարերով։

Հովհաննես Թումանյանի տուն-բանդարանի մոտ 1962 թ. կատարված շինարարական աշխատանքների ժամանակ գտնվել է մի դամբարան (հետազոտել է Հ. Ռ. Իսրայելյանը), որտեղից հայտնաբերված նյութը բաղկացած էր կարմիր փայլեցված ուրարտական և սև փայլեցված տեղական ամաններից, թվագրվում է VIII—VII դարերով (մ. թ. ա.)։

Բուսարանական այգում 1961 թ. շինարարական աշխատանքների ժամանակ բացվել է քարակղային դամբարանադաշտ։ Դամբարաններից մեկի նյութը չի հրատարակված, ուսումնասիրել է Ժ. Դ. Խաչատրյանը։ Դամբարանում եղել են մեկ խոշոր ձձում, մի քանի կավամաններ, երկաթյա դաշույն և նիզակ։ Թվագրվում է ուշ ուրարտական ժամանակաշրջանով մ. թ. ա. VII—VI դարերով։

Շինարարական աշխատանքների միջոցին հայտնաբերված հնագիտական նյութերի քննությունը ցույց է տալիս, որ մ. թ. ա. IV հազարամյակի վերջերից սկսած այժմյան Երևանի

տերիտորիայի վրա գոյություն է ունեցել բազմաշերտ էկոլոգիայի բնակատեղի հանձին Շենգավիթի, որը հայտնի է իր բազմաձև կացարաններով և Հայկական լեռնաշխարհի ամենահին պարսպապատով։ Այստեղի բնակիչները զբաղվում էին երկրագործությամբ ու անասնապահությամբ, բրուտագործությամբ և մետաղի մշակությամբ։ Շենգավիթի անկումից հետո կյանքը փոխանում չի դադարել։ այդ մասին են վկայում Շենգավիթի տերիտորիայում հայտնաբերված բրոնզեդարյան դամբարանները⁵ և Վերին Զեյթունում (Կիրզա) հայտնաբերված վերոհիշյալ վաղ բրոնզեդարյան նյութերը։

Մ. թ. ա. II հազարամյակի առաջին կեսում Երևանում գոյություն ունեւ մի այլ՝ Մուխան-նաթ-թափա կոչվող բնակատեղին («Սասունցի Դավիթ» կենոթատրոնից ոչ հեռու), որտեղից հայտնաբերված նյութերի մեջ կա մ. թ. ա. XVIII—XVI դդ. թվագրվող դոնազարդ խեցեղեն։ Նույն ժամանակին են վերաբերում Ծիծեռնակաբերդի դամբարանները։

Արարատյան դաշտ թափանցած ուրարտացիները մ. թ. ա. VIII դարից սկսած Երևանում կառուցում են Երեւունի (VIII դար մ. թ. ա.) և Թեյշեբաինի (VII դար մ. թ. ա.) ամրոց-քաղաքները։ Այդ ժամանակաշրջանում, ըստ երևույթին, գոյություն են ունեցել մանր բնակատեղիներ, որոնք սպասարկում էին վերոհիշյալ ամրոցները։ Այդ մասին են վկայում Մալաթիայից, Նոր-Արեշից, Բուսարանական այգուց, Թումանյանի տուն-թանգարանի շրջակայքից, Չարախից և այլ վայրերի դամբարաններից հայտնաբերված ուրարտական ու տեղական նյութական մշակույթի մնացորդները։

Ինչպես վկայում են Աքեմենյան ժամանակաշրջանի (մ. թ. ա. V—IV դդ.) նյութերի և ռուարձանների գյուտերը Արին-բերդում և մ. թ. ա. III—II դդ. թվագրվող վաղ հայկական դամբարանադաշտը Կարմիր-բլուրում, Ուրարտական պետության անկումից հետո էլ Երևանում կյանքը չի դադարել։

Ուշագրության արժանի է նաև հռոմեական տիպի արձանի քարե գլուխը, որը հայտնաբերվել է Արտաշատի խճուղու վրա (թվագրվում է մ. թ. ա. III դարով)⁶ և է. Խանզադյանի կողմից բացված կարասային թաղումներով դամբարանադաշտը «Հայրենիք» կենոթատրոնի մոտ (թվագրվում է մ. թ. III—IV դդ.)։

Այսպիսով, մ. թ. ա. IV հազարամյակի վերջերից Երևանի տերիտորիայում ծայր առած կյանքը անընդմեջ շարունակվել է մինչև մեր օրերը։

Ս. ՆՍԱՅԱՆ, Լ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ.

ԳԼԽԱՏԱՆ ԾԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՄՊԼԵՔՍԸ ԵՎԵԿԵԱԶՈՐԻ ԵՎ ԱԶԻԶԲԵԿՈՎԻ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

Հայ ճարտարապետության պատմության մեջ կարևոր տեղ է զբաղում բնակարանային ճարտարապետությունը։ Հանդիսանալով ամենատարածված բնակարանային տիպարներից մեկն անցյալում, հայկական ղլխատունը լավամիջս զբաղել է հետազոտողների ուշագրությունը։ Իր ծագումով այն պատկանում է շատ ավելի վաղ ժամանակների, քան մեզ հասած ամենահին զբաղում տեղեկությունները¹։


Նդեգնաձորի և Աղիղբեկովի շրջանները բնակարանային ճարտարապետության տեսակետից ունեն ուշագրավ առանձնահատկություններ, որոնք առաջացել են յուրահատուկ բնապատմական պայմաններում։ Սովորաբար բնակելի կոմպլեքսը բաղկացած է լինում ղլխատնից, որը տեղացիք «տուն» են կոչում, պատշգամբից («չարդախ», «էյվան»), մարագից ու մառանից («խորթանոցներ») և մեկ կամ մի քանի հյուրասենյակից («սենյակ», «օթախ»)։ Կոմպլեքսին կցված է դոմն իր առանձին մուտքով։

Կարևոր նշանակություն է ստացել սյունադարդ պատշգամբը, ղեպի որը բացվում են բնակարանային բաժանմունքների գրեթե բոլոր դռները, երբեմն նույնիսկ լուսամուտները։ Այն ծառայում է որպես ամառային նստավայր, արևահայաց է և տաք եղանակներին դրեթե փոխարինում է հացատանը։ Պատշգամբներում հաճախ լինում են թոնիրներ, երբեմն նրանց հատակը բարձրացված է կամ առջևի կողմից կիսապատնեշով եզերված, հատկապես հողմաշատ վայրի-


⁵ Ս. Սարգսյանի պեղումները (նյութերը չեն հրատարակված)։

⁶ Պրոֆ. Բ. Ն. Առաքելյանի թվագրումը։


¹ Այդ մասին առաջին անգամ հիշատակել է Քսենոֆոնը «Անարազիս» աշխատության IV գրքի V գլխում։





Նկ. 1. Բնակելի կոմպլեքս Մանիշկա գյուղում (Հատակագիծ)



Նկ. 2. Բնակելի կոմպլեքս Մանիշկա գյուղում (Կտրվածք)



4 9 P 4 U 0 F M - M



Նկ. 3. Մեկիթ-Ջաբարյանների տան առաստաղի ու կտրվածքը

բում: Գլխատունը պահպանել է իր կարեորությունը իրրե պատսպարան, հատկապես ցուրտ եղանակներին, նաև որպես խոհանոց և մառան: Վերջին ժամանակներս գլխատունը ծառայում է միայն որպես խոհանոց և իրերի ու սննդամթերքների պահեստ²:

2 Տան կահավորումը դրեթև չի տարբերվում այլ վայրերի գլխատների կահավորումից։ Նրա հիմնական մասը կազմում է մի քանի թախտ, ալյուրի ամրարը՝ փեթակը, քուրսին, երբեմն մի սեղան, «ուրյալթի» կոչվող երկար պահարանը՝ Դեռևս հանդիպում են զարդավորված թնիերով բավականաչափ ուշադրով կահույքի նմուշները Երբեմն էլ տան մի անկյունը, հատկապես ամրարի ետևի տարածուկը, առանձնացվում է վարադույրով և օգտագործվում իրեն մարդկանց մեկուսանալու տեղ կամ պահեստամաս։ Վերջին ժամանակներս դա քիչ է հանդիպում սժանդակ սենյակները շատանալու պատճառով։

Իրերը ղեկտնից բարձր տեղավորելու համար հին տներում պատերին ոչ շատ բարձր ելուստներ կան (թարեքներ), ինչպես նաև ղանաղան խորշեր՝ փեղկերով կամ առանց փեղկերի։ Խիստ կառուցապատում ունեցող դյուղերում տների միջև ակնատ կոշվող փոքր անցքեր են թողնվել հաղորդակցության և իրեր փոխանակելու համար։ Դա պահպանվել է լայն լուսամուտի նմանվող բացվածքների ձևով, որոնք բացված են իրար կից ղլխատների միջև, ծածկվել փեղկերով։ Հաճախ լուսամուտներ կան և արտաքին պատերի մեջ, որոնք, անշուշտ, նորամուծություն են։ Մարագն ու մառանն ունեն ամենաբազմազան ղիլքեր՝ ընդհանուր կոմպլեքսի մեջ։ Հանդիպում են նաև մառանների նկուղաին տիպեր, որոնք առավելապես զինեզործության հետ են կապված։ Գինեզործությամբ զբաղվողների տան անկյուններից մեկում սովորաբար գտնվում է հնձանը։

Գլխատան կոմպլեքսի հատակագծային հիշյալ առանձնահատկություններն ակներև դարձնելու համար բերում ենք մի քանի բնորոշ օրինակ։ Գինեզործությամբ զբաղվող մի դյուղացու տունը չափազրել ենք Եղեղնաձորի շրջանի Մալիշկա դյուղում (նկ. 1, 2)։ Այստեղ հմտորեն օգտագործված է լանջի թևքությունը. կոմպլեքսը գտնվում է ցանկապատված բակի խորքում և բաղկացած է սովորական տարրերից (ղլխատուն, նախասրահ, հյուրասենյակ, մառան և զոմ)։ Գլխատան անկյուններից մեկը հատկացված է հնձանին։ Քամված խաղողահյութի հնձանի որմնամերձ անկյուններից մեկի մեջ դրված խողովակից հոսում է պատի տակ, հնձանին կից պատրաստված փոսի մեջ, այստեղից էլ մի այլ խողովակով՝ ղլխատան պատի միջով ղեպիցած, հարթածածկ սենյակի տակ տեղավորված մառանը և լցվում նրա անկյունում տեղավորված ալգադանր։ Վերջինս ունի քառորդ ղլանի ձև։

Սոցիալական տարբերություններն անցյալում սրսահայտվել են հատկապես բնակարանների հատակագծերում. ունեորների տներն աչքի էին ընկնում համեմատաբար մեծ չափերով և օժանդակ կառուցվածքների շատությամբ։ Ուշադրալ մեծություն ունի Աղավնաձոր դյուղից Մելիր-Չարարյանների տան կոմպլեքսը, որի կառուցման ճիշտ ժամանակը հայտնի չէ։ Այն գտնվում է դյուղի կենտրոնում և Վ-աձև տեղավորված է պարսպապատ բակի շուրջը, ճանապարհների հատման անկյունում, բաղկացած է տարբեր ժամանակներում կառուցված շենքերից. որոնցից հնադույնը մեծ տունն է՝, Մյուս բաժանմունքներն են՝ երկու ղլխատուն, մի պատշգամբ, հին օթխը՝ երկհարկանի մի շենք տնտեսական և բնակելի հարկաբաժիններով, զոմը և նորակառույց միահարկ մի այլ շենք (հին զոմը քանդված է)։ Կոմպլեքսն ունի արևահայաց ճակատներ (նկ. 3)։


Ավելի մեծ մի ղլխատուն է եղել այս շրջանի Հորս դյուղի մելիքական տունը, որը շատ ավելի հին է (նկ. 4)։ Ավանդությունն ասում է, թև այդ տունը պատկանել է Սելիմա զղյակը շինող Զևսար իշխանին։ «Տունը,—դրում է Ե. Լալայանը,—բաղկացած է եղել մի սենյակից և մի սրահից, որ այժմ բոլորովին քանդված է։ Սենյակը ղեռես կանգուն է... Սենյակի հյուսիսային պատի մեջտեղում կա մի բուխարի, իսկ անկյուններում մի-մի թոնիր»։ Այժմ այս տունը ախոռի է վերածված և վերահիշյալ սրահի հետքն իսկ չկա. բուխարիկը փակված է, թոնիրները՝ ծածկված։

Հորս դյուղի այժմյան հայ բնակիչները տեղացիներ չեն։ Նրանք գաղթել են Նախիջևանի Բաղամլու դյուղից 1919 թ.։ Նրանց ասելով, նախկին ադրբեջանցի բնակիչները փորելով ղեկտնի տակից հանել են այս ուղղանկյուն մեծ տունը, որն ունեցել է յոթ թոնիր։ Այն ներկայումս կիսաթաղված վիճակում է և ամբողջովին չբացատված նոր կառույցներով։ Բաց է միայն ճակատի մուտքի մասը, շարված կիսամշակ որձաքարով, որտեղ կամարակապ դռան լավ մշակված պարակալի վերին քարերը չկան։ Այս պատի ներսի մասը շարված է սրբատաշ քարերով և ունի չորս զեղեցիկ կրկնահարկ որմնախորշեր՝ սլաքաձև կամարներով և մի քանի փոքրերը՝ ստալակտիտավոր զագաթներով։ Մյուս պատերը շարված են անմշակ քարերով և կրում են վերանորոգումների հետքեր։ Սրանք հավանաբար սվաղված են եղել։ Մուտքին հանդիպակաց ընդլայնական պատի մեջտեղում բեմահարթակի նման մի մեծ ուղղանկյուն խորշ կա, առաջը բոլոր-

3 1900-ական թթ. կոմպլեքսը նորոգման է ենթարկվել։

4 Այստեղ, մուտքից աջ, խորքում հարսները զորդ են գործել. լողանալու համար օգտագործել են ամբարի ետևում ընկած անկյունը, որը ծածկվել է վարագույրով։ Ամբարի տարողությունն է 20 բեռ ալյուր, որ երեք ամսվա պաշար է 52 հոգու համար։ Եղել են նաև շտեմարան-հորեր, որոնք այժմ չկան։

5 Ե. Լալայան, Շարուր Դարալագյաղի գավառ, «Ազգագրական հանդես», գիրք XII, Թիֆլիս, 1905, էջ 279։




Նկ. 4. Հորս գյուղի «Մեկերական» տան համակարգը


րովին րաց։ Պահպանված արդուչի փայտե սյուները և երեք միաշափ ու միանման քանդակազարդ սյունախարիսխները գերանաշար գմբեթի երրեմնի գոյությունն են հաստատում։ Կա շափերով և ձևով տարբեր մի սյունախարիսխ ևս. թերևս գմբեթաձև մասից դուրս գտնվող հորիզոնական մայր գերանները պահող սյուներից մեկը սրա վրա է դրված եղել։

Սղեզնաձորի և Աղիգրեկովի շրջաններում գլխատներն ունեն կոնստրուկտիվ որոշ առանձնահատկություններ⁶ որոնցով նրանք տարբերվում են այլ շրջանների նման շինություններից։ Նրանք անխտիր ունեն չորս սյուն, ընդ որում, ուրիշ շրջանների (օրինակ՝ Սևանի ավազանի) գլխատների համեմատությամբ նկատելիորեն փոքրացված է սյուներով և նրանց վրա բարձրացող գերանաշար գմբեթով կազմված մասը, որը նպաստում է ծխի արագ հեռացմանը (նկ. 5)։ Կառուցվածքային այդ յուրահատկությունները թևադրված են եղել շինանյութի տարրեր տեսակներով։ Նրկու մայր գերաններն իրար զուգահեռ զցված են հանդիպակաց պատերի վրա և համապատասխանաբար երկուական սյուն ունեն՝ իրրև միջանկյալ հենարան։ Սովորաբար լինելով բարդու առաձգական գերաններից, դրանք բավականաչափ երկար են և կարիք նն զգում միջանկյալ հենարանների։ Մյուս գերանները կարող են լինել բարդու, արդուչի և կամ այլ ծառերի փայտից։ Հնում արդուչի փայտն առավել գործածական է եղել իր դիմացկունություն պատճառով։ Արդուչի գերանների փոքրությունը և առհասարակ անսառանյութի սակավությունը նույնպես նպաստել են ծածկի կենտրոնական մասի փոքրացմանը։ Մայր գերանները արդուչի փայտից լինելու դեպքում նրանց երկարությունը հաճախ սահմանափակվում է միջսյունային տարածությամբ և պատերին չի հասնում։ Սյուների շուրջ ծածկը լինում է հորիզոնական և կամ թեքադիր գերանների վրա։ Հորիզոնական լինելու դեպքում պարագծային մասի մայր գերանների միջև ընկած հատվածի գերանները ծայրերով հենվում են մայր գերանների վրա (կից պատին զուգահեռ)։ Պարագծային մասի մյուս երկու կողմերի հենման ձևը նույնն է, ինչպես թեք լինելու ժամանակ, այսինքն՝ գերանաշարքի հենարաններ են հանդիսանում պատն ու նրան զուգահեռ մայր գերանը։ Աղավնաձոր գյուղում այս մասերը կայունացվում են առորմներով։ Դրանք պատին կպած, տակից քարակ սյուներով պահվող գերաններ են, որոնք ձգվում են ամբողջ պատի երկարությամբ՝ նրա վրա ընկնող բեռը թեթևացնելու համար (նկ. 3)։ Ծածկի սյուների միջև պարփակված մասն այստեղ ևս ունենում է բրդաձև, հազարաշեն և կամ խոտր կառուցվածք։ Վերջին ձևը լայն տարածում է գտել և աչքի է ընկնում գերանների ներդաշնակ դասավորությամբ։ Նրա ստորին, ընդամենը չորս գերանաշարքերով կազմված բրդաձև մասից կատարվում է փոխանցում դեպի ավելի բարդ՝ հազարաշեն գմբեթաձևը⁷։ Առաստաղի ձևավոր փորվածքներ չկան, սակայն որոշակի ուշադրություն է նվիրված սյուների ձևավորմանը։ Վերջիններս սովորաբար արդուչի փայտից են պատրաստված։ Լայն տարածում ունեն նաև պակաս դիմացկուն փայտերից պատրաստված սյուները, որոնք մշակվում են ավելի լավ և հեշտ։ Դրանք լինում են ուղղանկյուն, մեծ մասամբ քառակուսի և վեցանիստ կտրվածքով։ Հաճախ սյուների վրա խոյակներ են դրվում՝ բացառապես կրկող գերանների ընդլայնական ուղղությամբ։ Նրբեմն սյուների տակ դրվում են քարե ձևավոր, քանդակազարդ խարիսխներ (սնքաբեր)։ Ծածկի ենթաշերտի դասավորությունը բրդաձև մասի վրա կատարվում է երեք եղանակով. այն դրվում է կամ ուղղակի գերանների վրա թեք դրությամբ (նկ. 5), կամ սյուների շուրջ եղած ծածկի գերանների շարունակությամբ (նկ. 3) և կամ հորիզոնական ուղղությամբ՝ դույզ առ դույզ թեք դրված հաստ ճյուղերի վրա, որոնք հենվում են բրդաձև դասավորված գերանների հաջորդական շարքերին։ Ծածկի հազարաշեն մասը, բաղկացած լինելով խիտ դերանաշարքերից, միաժամանակ ծածկի ենթաշերտն է (ճյուղեր չեն դրվում)։ Պատշգամբի ծածկը ընդլայնական ուղղությամբ դրված գերանների վրա է նստում։ Այդ գերանները հենվում են մի կողմից պատի և մյուս կողմից սյունաշարով պահվող ճակատային հորիզոնական գերանի վրա։ Նրանք ծայրերը երբեմն զգալի չափով առաջ են դալիս հենարանից և կրում ծածկի առաջ կարկուցված մասը։ Հողի կտուրի եզրաշերտի լվացումն ու հողմնացրումը կանխելու համար այս գերանների ծայրերի վրա դրվում են՝ մի հորիզոնական գերան, ճյուղեք կա տախտակ, որոնց վրա առավելագույնը 20 սմ բարձրությամբ քարեր են շարվում իրրև պաշտպանիչ եզրաշերտ։ Խոյակներն այստեղ ևս դրվում են գերանի ընդլայնական ուղղությամբ և երբեմն դարպարվում սղոցաձև փորվածքներով։

6 Սևանա լճի ավազանին մերձակա բնակավայրերում (Սելիմի ձոր) գլխատների ծածկերի կառուցվածքը որոշ չափով նման է լճափնյա բնակավայրերի համապատասխան կառուցվածքներին (միջսյունային կենտրոնական տարածությունները զգալի մեծություն ունեն, սյուները պատերից հեռացված են անհամեմատ ավելի քիչ, ծածկի ենթաշերտը՝ փարդուն, զրվում է թեք, առանց լրացուցիչ հենարանների, ուղղակի գերանների վրա)։



Կ Տ Ր Վ Ա Շ Ժ Ա - Ա



1 0 1 2 3 4 5 6 Մ

Նկ. 5. Գլխառան աստառաղ և կտրվածք (բետաի գյուղում)

Այժմ կուտնտեսականների կողմից օգտագործվող հնատիպ զոմերը մեծ չեն. նրանց տա-
րածված ձևն է կենտրոնական մեկ սյունաշարով, երկթև ծածկով և պատերին կից մսուր-
ներով տիպը: Մսուրները եզերող զերանների վրա բարձրացող սյուներով ու նրանց վրա զըր-
ված հորիզոնական զերանով լրացուցիչ հենարան է ստեղծված ծածկի համար: Հուսավորումը
կատարվել է դռան բացվածքի և առաստաղի միջի անցքերի (սերդիկների) միջոցով: Ինչպես
առհասարակ ժողովրդական ճարտարապետության մեջ, նույնպես և այստեղ, օգտագործվել են
տեղական շինանյութեր և միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում դրանք բերվել են ուրիշ
տեղերից: Կարևոր շինանյութ է եղել անտառանյութը, որն օգտագործվել է ծածկերի, սյու-
ների, դռների ու լուսամուտների պատրաստման համար: Ինչպես նշեցինք, օգտագործվել են մեծ,
մասամբ բարդու զերաններն իրենց երկարության և արդուջի դերանները՝ իրենց դիմացկունու-
թյան պատճառով: Ծածկաշերտերի հենարան հանդիսացող ճյուղերի համար օգտագործվել են
և այլ ծառերի փայտեր: Եղևյի բացակայության պատճառով իրեն ծածկի լիցքային մասը
պահող շերտ օգտագործվել են տարբեր ծառերի շիվեր ու որթատունկի ճյուղեր (տեղական բար-
րառով՝ «ջառջի»): Ծածկի մեջ երբեմն այս շերտի վրա փռվել է խոտի կամ ծղոտի շերտ և
այս բոլորի վրա՝ հարդախառն կավե ծեփաշերտ («փլու»): Պատերը շարվել են տեղական քարի
բեկորներով կամ գետաքարով: Կրաշաղախ բոլորովին չի օգտագործվել: Հասարակ կավահողը
ոչ միայն ծառայել է որպես շաղախ, այլև հաճախ օգտագործվել որպես հիմնական շինանյութ:
պատերի համար: Նրա և հարդի խառնուրդով պատրաստված աղյուսների կիրառումը պարսկա-
հայերի շինարարական փորձից է դալիս անտարակույս և լիովին համապատասխանում է տե-
ղական պայմաններին: Պատերը ներսից, երբեմն նաև դրսից, սվաղված են հարդախառն կավե,
շաղախով և սպիտակեցված սպիտակ կավի լուծույթով: Սրբատաշ քարը, որ այնքան հմտորեն
օգտագործված է այս շրջանների մոնումենտալ կառուցվածքների մեջ, բնակելի կառուցվածքների
վրա երբեք հանդես չի գալիս: Անկանոն ձևի սալաքարեր են օգտագործվել զոմերի սալահա-
տակման համար:

Ճարտարապետական արտահայտչականության և շինարարական որակի տեսակետից բա-
վականաչափ նախնական հիշյալ կառուցվածքները բնականաբար պետք է իրականացվեն
մասնագիտական տեսակետից ոչ այնքան որակյալ վարպետների կողմից: Հաճախ գյուղացի-
ներն իրենք էին կառուցում բնակելի շինությունները ընտանիքի անդամների օգնությամբ: Եթե
նկատի ունենանք նաև այն հանդամանքը, որ տասնյակ հազարավոր շինականների զաղթեցում
տեղի ունեցավ 1828 թ. ռուս-պարսկական պատերազմից հետո, ապա միանգամայն պարզ կլինի,
որ այդքան մեծաքանակ ազդեցության բնակարանային պահանջները չէին կարող բավա-
րարվել մասնագետ վարպետների կողմից: Հետևաբար զաղթականը հարկադրված էր ինքը կա-
ռուցել հնավանդ ձևերին համապատասխան և չափազանց նախնական եղանակով:

Այս բոլորը ցույց է տալիս, որ կենցաղի պարզությունն ու ավանդությունները նշանակա-
լից դեր են խաղացել Եղևյեղաձորի և Ազիզբեկովի շրջանների ժողովրդական ճարտարապետու-
թյան համար: Այն արտահայտվել է բնակավայրերի համեմատաբար ազատ կառուցապատ-
մամբ՝ ցանկապատերով եզերված ճանապարհներով և արևահայաց կոմպլեքսներով, որոնց մեջ
կենտրոնական դիրք ունի ավանդական գլխատունը՝ իր սյունավոր պատշգամբով: Ոչ այնքան
բարդ և ոչ այնքան շքեղ, այնուամենայնիվ յուրահատկություններով ուշագրավ այս կառույցները
որոշակի նյութ են տալիս ուսումնասիրելու համար գլխատան ճարտարապետական կոմպլեքսը,
որի մեջ թաքնված են շատ հետաքրքիր մանրամասնություններ՝ ճարտարապետական ձևերի
առաջացման վերաբերյալ:

Ն. ՊԱՊՈՒԽՅԱՆ

ՀՈՒՆԱԿ-ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

X—XI դարերում Հայաստանում զգալի չափով աճում է հետաքրքրությունը դեպի անտիկ
կուլտուրան. հելլենական տրամադրությունները նորից վերականգնանում են, սկսում են հու-
նարենից թարգմանել ճարտասանական, փիլիսոփայական գործեր: Այդ շրջանի խոշոր գեմքե-
րից մեկը՝ Գրիգոր Մաղիստրոսը լավ ծանոթ էր հին հունական գրականությանն ու փիլիսո-

7 Բնդհանրապես արտաքին ձևավորմամբ աչքի ընկնող բնակելի տներ չկան, բացառու-
թյամբ մեկից (Կետափ գյուղում), որը կառուցել են Սեանի շրջակայքից եկած վարպետները:

փառությունը¹, Հոմերոսի արվեստին, Դիոնիսոս Թրակիացուն², քաջատեղյակ էր հունական առասպելարանությունը, նվազապես նաև, որ նա դառնում էր, թե ուսումնառությունը պետք է սկսել այդ առասպելարանությունից և Հոմերոսի ու Պլատոնի գործերից: «Յունաց անդանդադ քառիցն արհեստից հետևարար մասին ինչ տեղյակ լինել քաջ զի այսոսիկ կրթեալ դմել զհնագոյն վարկանէի, անկողոպտելի եւ անծայրագոյն ստանձնել, քան զամենայն ինչ որ ի կենցաղումս ազնուագոյն... եւ ի խոյզ ելանէ ջերմագոյն եւ քաջ ողջական խոհականութեամբ եւ տրամարանական հատուածոց հոմերական եւ պղատոնական նախասականին եւ այլոցն որոյր արհեստից եւ մատենից...»³: Հունական գրականության և կուլտուրայի նկատմամբ նրա տածած սերն են հավաստում Ներսես Շնորհալու հետևյալ տողերը Մագիստրոսի մասին.

Ըստ Հոմերի Կուղաչափեալ
Ըստ Պլատոնի պերհաբանեալ
Յունականի ներսես եղեալ
Յոնք իմաստնիցն մակացեալ...⁴:

Մագիստրոսը օգտագործում է հունական դիցարանությունը իր «Յաղագս խաշանշան քաւազանին, զոր ընծանաց տեսուն Պետրոսի Հայոց կաթողիկոսի» գործում, որի մասին հետաքրքրական դատողություններ է անում ինքը՝ հեղինակը: «...Հագներգութիւնս այս ոչ ըստ որում հագներգութիւն է մասն քերթածոց ներտառեալ ստորագրութեամբ եւ ոգեալ է հագներգութիւն ի հագնելոյ կարկատուն րան եւ կամ իր սարդենի մահակն, պարտ գոլով երգել զհոմերական քերթածսն, այլ տաղ է քաջ ոլորեալ, եւ սա տաղ դիցազնական շափարերեալ ըստ հելլենացոցն...»⁵:

Այդ գործը գրված է խրթին և դժվարամատչելի գրարարով: Նրանում հիշատակություն կա Հոմերոսի մասին: Բանաստեղծական շունչը հոմերական է, Մագիստրոսը ոչ միայն օգտագործում է Հոմերոսին, այլև փորձում է գովերգական եղանակով նմանվել նրան. «Վայել է, վ՛ւ՛մ կեփայակա՛ն, հիմն րոյր դու պետութեա՛ն...», կամ՝ «Մեծ են գործք աստուածայի ն, քսրանչելի նորա րանի՛ն...»: Մի այլ առիթով օգտագործված է պիկական հնարանները ևս հոմերոսյան բնույթի են. այսպես՝ «ի Գրիգոր եպիսկոպոս Մոկաց» գործում Գրիգոր Մագիստրոսը գրում է. «...յաճախ զգորութիւն Արիղղեայ ոչ դանդաղի Հոմերոս պատուել գովասանական րանիւք եւ ան վճիտ ականակիտ, շափարերական, մանուածոյ ոսկետեսակ, հրաշ առասական, մակարդակեալ տաղիւք, յիւրումն սքանչելի տախտակին յառաջնուն մատենին: Նա զսա եւ Ափրեկանոս յիշատակէ, այլ եւ շինութիւնս քաղաքաց վասն որոյ պարսպամարտ անուանեալ հաւանեցաւ, իսկ մեր Մովսէս զԱրտաշեսին եւ զՏիգրանայն»⁶: Այստեղ դարձյալ Մագիստրոսը դրվատանքի խոսքեր է ասում Հոմերոսի արվեստի մասին, այն ընթացքներով «աչականակիտ, ոսկետեսակ, հրաշ առասական» ածականներով:

Հետաքրքիր է Մագիստրոսի կարծիքը նաև շափածո ոտանավորի մասին, ուր բացահայտվում է նրա վերարբմունքը Հոմերոսի արվեստի նկատմամբ. «...դիցազնական, տաղ, քաջ ոլորեալ տաղ պղպղուն, տաղ օղուն եւ զեղուն, լի հոյծ, կատարուն, շարժուն, ոչ վիժեալ գծի նւազեալ յօդի ոչ փոփոխեալ տառին...»: Այն տեսանկյունից դիտելով է, որ նա Հոմերոսին անվանում է «գեղեցկարան», իսկ նրա գործերը՝ «տաղք քաջ ոլորեալ»: Մագիստրոսը չէր համարում, որ հոմերոսյան գրականության և կուլտուրայի նկատմամբ նրա արվեստի արժեքը, իմաստասերի «Բան իմաստութեան ի պատճառս գրասա-

¹ «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», Ալեքսանդրապոլ, 1910, թուղթ ԿԱ, էջ 139:

² Н. А д о н ц, Дионисий Фракийский и его армянские толкователи, Пгд 1915, էջ 223—248:

³ «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», թ. ԽԵ:

⁴ Ն ե ր ս ե ս Շ ն ո ր հ ա լ ի, Վիսպասնութիւն, 1820, էջ 410:

⁵ «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», թ. Խ:

⁶ Նույն տեղում, թ. ԽԵ:

նաց առ ձագն՝ որ զաղօթանոցաւ նորա ճոռուղէր քաղցրաձայն՝ որ կոչի սարիկ» երկում գովերգվում է բնատուր տաղը. ինչ որ բնությունից է պարզեւլած՝ բարձր է ու վսեմ։ Այս կապակցութեամբ տեղին է հիշել պրոֆ. Մ. Արեղյանի հետեւյալ խոսքերը. «Բանաստեղծը արվեստը, ուրեմն և բանաստեղծությունը նմանողություն է համարում բնության և բնականն ամենից բարձրն ու մարտիրոս, ուստի բանաստեղծը պետք է աշխատի նմանել բնության...»⁷։

Հովհաննես Իմաստասերի գործունեությունը չի սահմանափակվել եկեղեցուն ծառայելու շրջանակների մեջ, նա ձգտել է բազմակողմանի զարգացման. «...հին ընտիր հեղինակագ հետևությունը, հելլենախոհությունը, կարճ ըսելով անոր համար այս մակդիրը տվան իրեն», — գրում է Ալիշանը նրա մասին⁸։

Բանաստեղծական արվեստի տեսակետից «Բան Իմաստության» տաղում օգտագործվում են գեղեցիկ դարձվածքներ, համապատասխան ոգեշնչող էպիտետներ։ Բանաստեղծության լամբական ութմը հիշեցնում է Հոմերոսի բանաստեղծական շափը⁹.

Ո՛վ պարոզ դու անձանձիր և կափավիշ յոճանրա՛գ.

Արդ ուստի իցէ քեզ խօսել յայլայլելու և յրնտանիս

Եվ ուսո՛ւ ինձ, զի ծանեալց կիսակատաւ Իմաստակիս

Մի սլատնառեւ զանբանութիւն, դու յօղաձայնող վերձանող¹⁰։

Ամփոփն Բերաջին, Օրիոնը և վերջապես Վորփեոսը (Օրփեոս) մեծ երգիչներ են, սակայն նրանք, ըստ Իմաստասերի, բնատուր շնորհ չունեն, մինչդեռ Սարեկը, ոտի երգերի միջոցով Հոմերոսի տաղերը հայտնի դարձան բոլորին, օժտված է բնական ձիրքով։ «Նա (Իմաստասերը), — նշում է Արեղյանը, — հաջողությամբ է լուծում կարևոր գրական խնդիրը, պնդելով, որ բանաստեղծը նմանվում է, հետևում է բնության, իրականության... այս արդեն մի մեծ նորություն է մեր գրականության մեջ»¹¹։

Այս շրջանի համարյա բոլոր հայ բանաստեղծների մոտ հանդիպում ենք եթե ոչ Հոմերոսի արվեստի լուրջ ազդեցության, ապա գոնե անվան հիշատակության։ Հոմերոսը մեծ համբավ է վայելել որպես բանաստեղծական, էպիկական արվեստի մեծագույն հեղինակություն։ Եվ եթե որևէ գործիչ չէր լինում Աթենքում, չէր ծանոթանում Պլատոնի «Իմաստությանը» և Հոմերոսի գործերին, մեծ փոստանքով էր հիշում այդ մասին. ահա թե ինչ է գրում Շնորհային այդ առթիվ.

Չի երանեղից վարժարանի

Չեմ տակալին ներկուս յսնի՛

ՅԱրևեական քաղաքի

Ձանձն Իմաստիւմ ոչ կրքեցի

Ուր յսարան Պլատոնի

Եւ չափ ոտիւմ Հոմերովսի¹²։

Բնորոշ է, որ հենց իր՝ Շնորհալու առաջին գործերից մեկը վերնագրված է «Շարադրութիւն հոմերական վիպասանութեամբ սակս Հայկազեան սեռի եւ Արշակունեաց զարմի ի ոկզրանէ մինչեւ ի վախճան»։ Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կարելի է որոշ ընդհանրություն գտնել Հոմերոսի ստեղծագործության և Շնորհալու այս գործի միջև հենց թեկուզ էպիկական առանձնահատկությունների՝ համեմատությունների և դեպքերի ընթացքի կամ հերոսների նկարագրերի տեսակետից։

Շարժի կրկին զազգին փրանկ

Անհուն նեժեալ և նետուակ

Իրե զծովումն ալեաց կուտակ

Բորբոքելով՝ զան խիստ եւ բարկ¹³։

⁷ Մ. Արեղյան, Հայոց հին գրականության պատմություն, Երևան, 1944, գլ. 1, էջ 140։

⁸ Ղ. Ալիշան, Յուշիկը Հայրենեաց Հայոց աշխարհի, Վենետիկ, 1870, հատ. 2, էջ 280։

⁹ Անհրաժեշտ է նշել, որ հեկկամետորը հայերենում համարյա միշտ փոխարինվել է յամբական շափով, որով և գրված է Իմաստասերի տվյալ գործը։

¹⁰ Ա. Գ. Արրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Երևան, 1956, էջ 322—323։

¹¹ Մ. Արեղյան, Հայոց հին գրականության պատմություն, հատ. 2, էջ 61։

¹² Ներսես Շնորհալի, Բանք չափաւ..., Վենետիկ, 1830, էջ 496։

¹³ Ներսես Շնորհալի, Վիպասանութիւն, Վենետիկ, 1830, էջ 395—396։

Հոմերոսի մոտ նման տիպի համեմատությունները ծովի հետ անհամար են: Այսպես՝ «նվմբակեց ծողովն իսկույն, ինչպես ալիք իսու ծովի...», կամ «Իյիական»-ի 2-րդ երգի 395—396 տողերը, ուր ասված է՝

Արգիվացիք աղակեցին ահեղնագոչ
Ինչպես ծովի ալիքները բարձրիկ ափին...:

Շնորհալու «Իպասանության» մեջ հանդիպում ենք

Ընդ նփրատ անդրափայլեալ
Եւ զաւգակսն սատակեալ,
Նոր Աֆիլլես աստ Լեւեալ
Ընդ Սկամանդրոս գետն վազեալ¹⁴:

Այս տողերն ապացուցում են, որ հեղինակը ծանոթ է եղել Հոմերոսի ստեղծագործությանը: Այս միտքը հաստատում է նրա «Ողբ Եղեսիոյ» պոեմը ևս, ուր քաղաքը ողբում է մարդկայնորեն, թվում է, թե ողբացողը ինքր՝ որդեկություն Հեկարեն է, կամ զառամյալ Պրիամոսը: Այս հերոսները Շնորհալու մոտ վերափոխված են քաղաքների, որոնք ողբում են Եղեսիայի վիճակը: Գեղարվեստական նախադրանքը եւ հիշեցնում են Հոմերոսի արվեստը, ինչպես, օրինակ, Հալիտեսները, որոնք քերականորեն բարդացված ձևով են օղտագործված՝ արփափայլ, ոսկեթել, պաճուճան և այլն և այլն: Ուշագրավ է կամբուսացու վկայությունը Շնորհալու մասին.

Հոմերական տալից չափող
Ոտանավոր տառից սրտող
Ի ողբերգսն ոգնոյն տուող
Որով քգսիրտս կառծւ նմլող¹⁵:

Հաջորդ հեղինակը, որի ստեղծագործությունը առնչվում է Հոմերոսին և հունական դիցաբանությանը, հաշտուր Կեչառեցին է: Սա «Ի գրոց հոց» արտագրել և «խմրագրել է» «Վարդ Ալեքսանդր Սակեղոնացու» գործը: Կեչառեցին իր աշխատանքը գնահատում է որպես «Քերթողորեն» կատարված մի գործ¹⁶: Նա հավանաբար մեծ սեր է տածել դեպի հունական գրականությունը և Հոմերոսը: Հետաքրքիր է այս կապակցությամբ Կեչառեցու հայտնած հետևյալ միտքը.

Ոչ հիսնայ լաղ վասն աւի
Քաջագնարսուր յափրն գետի.
Այլ զներբոզեան Հոմերոսի
Բաղկացական բան գովեստի
Այսպես դու առ ի մտի
Մոյլ և ծանակ Կեչառեցի¹⁷:

«Նա ոչ միայն իրեն հավասար չի զգում Հոմերոսին,—գրում է Արեղյանը,—այլև ծույլ և ծանակ է համարում իրեն նրա համեմատությամբ»: Ավելին, նա չի զարմանում Արիլլեսի քաջության վրա: Նրան հիացմունք է պատճառում «զներբոզեան Հոմերոսի»: Այս փաստը արդեն ցույց է տալիս, որ Կեչառեցին հույն մեծ հեղինակի մասին դատողություններ է անում ոչ թե կուրորեն, սոսկ իրրե մի մեծության, այլ գնահատում է նրա պոետական մեծ արվեստով ստեղծված ներբողները:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում «Պատճառ լայն եւ նուրբ դեան առեալ ի հարցն սրբոց եւ վարդապետաց եւ ի մի հաւաքեալ եւ հոգացեալ մեծ բարունապետին Գրիգորի որդւոյ Արասայ» և Գրիգոր Աստվածարանի հինգ ճառերի Նոննոսի մեկնություններում պահանջված առասպելների համեմատումը, ուր Կեչառեցին ուղղումներ ու հավելումներ է կատարում հունական մի շարք առասպելների մեջ, ինչպես նաև Արամազդին վերաբերող առասպելում: Այդ հավելումները և ուղղումները թերևս ճշտում են առասպելի բովանդակությունը:

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ «Թուղթ Բնդհանրական արարեալ երանեալ... Շնորհալույն», Ս. Էջմիածին, 1865, էջ 461:

¹⁶ Ի դեպ, Տաշյանը ոչ միայն համաձայն չէ նման ընութագրմանը, այլև ոչ մի արժեք չտեսնելով այդ աշխատանքի մեջ, «քերթող» բառը փոխարինել է «քերող» բառով:

¹⁷ Մ. Արեղյան, Հայոց հին գրականության պատմություն, հատ. 2:

Հետաքրքրության արժանի է Գրիգոր Աստվածարանի հինգ ճառերի և Գրիգոր Արասա յրգու «Պատճառաց գլխում» պահպանված հունական առասպելների համեմատումը¹⁸։ Այս ճանապարհով կարելի է պարզել, թե ինչպիսի փոփոխությունների կամ ուղղումների են ենթարկվել այդ առասպելները և ինչ վիճակում են մեզ հասել¹⁹։ Այս առումով հետաքրքիր է Հեփեստոսի մասին առասպելը²⁰։ «Հեփեստոս կաղ էր երկու ոտիւքն։ Բայց արուեստիւ դարբին և Արէս տոփեցաւ Ափրոդիայ՝ կնոջն Հեփեստեայ, զոր գիտեցեալ արար որոգայթ Արէսի իւր փառաւոր արուեստիւ դարբնութեանն, և բմրոնեալ բեռեաց ընդ որում զԱրէս եւ կոշեցեալ զայն աստուածսն ծիծաղեալ, անշափ զԱրէսի թուլասիրութեամբ՝ արդ Արէս ի նեղութեան էր բեռմամբն...»։

Մաշտոցի անվան Մատենադարանի № 1879 ձեռագրի 222ա էջում ավելացված է. «Հեփեստոս դարբին էր ետես զԱրէս կնոջն իւրում և զուգեալ որոգայթ կաղաւ զԱրէս կոշեցեալ զայլ աստուածսն ծիծաղեալ զԱրէսին որպէս յառաջդ այլ դրած է զայն կոշի անշափութիւն ծաղու, յայց Հեփեստոս փառաւոր եւ գոված էր արուեստին, որ արար Արէսի...»²¹։ Այս շտկումների ետևանքով հունական առասպելը մեզ հասել է ավելի անաղարտ ձևով²²։

Կարելի է բերել հունական առասպելի բովանդակության և հայկական օրինակի տարբերությունների կամ նմանությունների ևս մի օրինակ։ Այսպես՝ «Յաղագս Հերակղեայ» առասպելը ձեռագրում պահպանված է այս վիճակում. «զՀերակղեայ ասեն, թե Արամազդայ որդի էր, եւ երկոտաւան հանդէս կատարեաց յաղթութեան։ Հերակղայ կին ունէր որուն անունն էր Դեիհանիրայ, յորմէ ծնաւ զՀուլլոս²³ և Նևուս, որ մի էր յսկայիցն²⁴, ցանկացաւ կնոջն Հերակղեայ և գիտացեալ նորայ, նետիւ եսպան զՆևոսս։ Եւ յարէնէն ետ կնոջ իւրում Դեիհանիրայ ասէ. յորժամ գիտացես թէ ես այլ իմն կնոջ ցանկամ յարինէդ հասալի հանդերձն իմ, զի առ քեզ դարձի սէրն²⁵։ Իսկ յորժամ տրփեալ եղև Հերակղեայ դստերն Ուրեստեայ և գիտացեալ կինն նորայ արար որպէս պատուիրեա նմա եւ Հերակղեա (՝) եւ իրրեւ զգեցաւ զպատմութեանն եկեալ զՀերակղեայ և յարին անկաւ ի գետն, որ մերձ էր եւ ջերմացոյց ջուրսն հորմէ և եղեն ջերմուկքն ի Թեսաղ և ի Փովկիսու։ Այլ Պովրեստեն որոյ դստերն ցանկացաւ Հերակղայ, թրակացի էր ազգաւ ունէր երկուս որդիս և աւագակր էին, զոր գիտացեալ Հերակղեայ սպան զնոսա և գիտացեալ Պովրեստեայ անկաւ ի ծով և եղև ծովային դեւ...»։

Մատենադարանի № 1879 ձեռագրի տվյալ առասպելը, ինչպես ցույց է տալիս ակադ. Մանանգյանի ժողովածուի հետ կատարած համեմատությունը²⁶, իր հիմքում նման լինելով հունական պատումներին, ունի որոշ անճշտություններ, լեզուն ծանրաբեռնված չէ, թեև հակիրճ պատմելու ձևից տուժում է բովանդակությունը, մասնակի դեպքերում չեն հիշատակվում այն վայրերը, ուր կատարվում է գործողությունը։ «Յաղագս Տաւրացւոց աւտարասպանութեան» առասպելում մոռացության է մատնված Ավգիդը, ուր պետք է զոհվեր Իֆիգենիան²⁷։

18 «Վարք Աղեքսանդր Մակեդոնացւոյ», Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 1879։

19 Հմմտ. Մ. Ավդալբեկյան, Խաչատուր Կեչառեցի, Երևան, 1958, էջ 56։

20 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 1879։

21 Մ. Ավդալբեկյան, Խաչատուր Կեչառեցի, էջ 56։

22 Հմմտ. նույն տեղում։

23 Նունոսի մեկնություններում մի քանի բառով պարզվում է, թե ումից է Հերակլեսը վերցրել Դեիհանիրային՝ «զոր էր առեալ ի Յունեոսէ փող գոլով Աքեղաւոս գետոյ...», մի հանգամանք, որը ավելի լիակատար է դարձնում առասպելը, ուր ասված է, որ Հերակլեսը Զեսի որդին էր, 12 հաղթանակ տարավ, մի կին ուներ անունը Դեանիրա, որից ծնվեց Հուլլոսը. մի հսկա, Նևոս անունով, Դեանիրային տիրեց, այդ մասին իմանում է Հերակլեսը և նետահարում Նևոսին, ապա վերցնելով նրա թունոտ արյունից տալիս է կնոջը և ասում. «Եթե երբեք ես մի այլ կնոջ սիրեմ, քսիր այդ արյունից իմ հանդերձանքին և սերս քեզ կվերադառնա» և այլն։

24 Նույն տեղում, էջ 26, «Կենտարոսացն» ձևը ավելի ճիշտ է։

25 Ինչպես հայտնի է հունական պատմից, մեծնող Կենտավրոսն է տալիս իր թունոտ արյունից Դեանիրային, որպեսզի վրիժառու լինի Հերակլեսից։ Այսպես ուրեմն, ձեռագրում պիտի է թույլ տրված։

26 Հ. Մանանգյան, Dilscholien... (Նունոսի հինգ ճառերի մեկնություն)։

27 Իֆիգենիան հունական զորքի առաջնորդ Ագամեմնոնի աղջիկն էր, որի զոհողությունով էր պայմանավորված արայական բանակի սկզբնական հաջողությունը։

Աստվածուհի Արտեմիսը զայրացած էր Ագամեմնոնի վրա, որովհետև վերջինս սպանել էր Փրա հովանավորության տակ եղած եղջերու, այդ իսկ պատճառով ուղեկից հողմ չէր տալիս

Բովանդակության տեսակետից աղավաղված առասպելի հանդիպում ենք նաև Մատենադարանի «Նոննոսի մեկնությունները» ժողովածուի մեջ: Պանի ծնունդը պատկերող «Յաղագս պարկեշտին ղՊանայ» առասպելում թյուրիմացարար Պանը համարվում է Հոմերոսի հերոսուհիներից մեկի՝ Պենելոպեի որդին²⁸: «Յղացեալ ծնաւ ղՊանն»,—ասվում է առասպելում, մինչդեռ հունական առասպելում ասվում է, որ Պանը Դրիոպե հովերժահարսի որդին էր. նա Հունաստանի հին աստվածներից էր և Հոմերոսյան ժամանակներում մեծ դեր է խաղացել: Նրան պատկերել են նոսազոտն: Հոմերոսյան հիմնը Պանի մասին ասում է, որ վերջինիս Արկադիայում պսշտել են իրրե անասնապահության աստված (հիմն 18)²⁹: Բացի այս աստծուց նման անունով հն կոչվել նաև դեմոնական կանները, որոնք ապրում էին սարերում և ընկերակցում սատիրներին: Այնպես որ այս առասպելում սխալ է սպրդել. Պան աստծո ծնունդը կապված է մահկանացու անձնավորության՝ Պենելոպեի հետ:

Վերահիշյալ ձեռագրերում հիշատակված մյուս բոլոր աստվածներին (Հերա, Դիոնիսիոս, Զևս) վերաբերող առասպելները բովանդակության տեսակետից համընկնում են հունական բնագրին: Պետք է ենթադրել, որ նման աղավաղումները բանահյուսական շեղումներ են, հիմնականում նրանք Հոմերոսյան պոեմներում առկա աստվածներն են և կատարում են իրենց համապատասխան ֆունկցիաները: Նույն առասպելի տարրեր պատումների առկայությունը տեղիք է տալիս բովանդակության, իմաստի, առանձին աստվածների, հերոսների, գործողության վայրերի անվանումների աղավաղումների, իսկ երբեմն էլ փոփոխման: Այնուհանդերձ նման առասպելները ևս խմբագրվել են Կեչառեցու կողմից:

Այսպիսով, ամփոփելով անհրաժեշտ է նշել, որ «Իրք պատճառաց»-ում, որը հավանաբար խմբագրվել է Կեչառեցու կողմից, հաճախ ենք հանդիպում առասպելների, որոնք ավելի ճշմարտացի են և ավելի ամբողջական պատկեր են ստեղծում հունական առասպելաբանության հերոսների մասին, քան Նոննոսի մեկնությունները: Տվյալ ձեռագիրը հետաքրքիր է նաև այն տեսակետից, որ հաճախ պատմվող առասպելները, նրանց հերոսները, աստվածները թվում է թե բերված են ուղղակի Հոմերոսի «Իլիականից» և «Ոդիսականից», մի հանգամանք, որը վկայում է այն մասին, թե տվյալ ձեռագիրը կազմող հեղինակը քաջ ծանոթ է հունական առասպելաբանության նախահոր ստեղծագործությանը և բազմաթիվ առիթներով օգտագործում է նրան, նշելով՝ «Հոմերոս պատմէ», «այս ի Հոմերոսի հագներգութիւնս գրեալ է», «Հոմերոս ի ներքս մուծանէ»:

Հետաքրքրական է Մաշտոցի անվան Մատենադարանի № 2110 ձեռագիրը (գրիչ՝ Ստեփանոս Աղթամարցի): Այստեղ ոչ միայն բազմաթիվ առիթներով հիշվում է Հոմերոսի անունը, այլև պատմվում են նրա վիպերգություններից առանձին հատվածներ: Նման դեպքերում ասվում է՝ «այս ի Հոմերոսի հագներգութիւնս գրեալ է», «ասէ Հոմերոս» և այլն: Բերենք մի քանի րի-նակ. «Յաղագս Երիվարին, որ կապ խղէ» գրույցում ասվում է. «..Հոմերոս քերթող կամեցեալ գԴիովմեղեայ գարութիւն և զջերմութիւն գմարտան արտասել ի ձեռն առակի նմանեցուցանել զդիւցազն ասելով. իրր երիվար ոմն ուժգին պարարեալ և որոտացեալ առ մսուր»³⁰: Եվ կամ՝ «Յաղագս թե զիա՞րդ երկիւղ էր աստուածոցն, գուցէ փոխելով երկնի՝ յատակք երկրի պատառեսցին է և հրապարակեցին ղժողք: Եւ այս ի Հոմերոսի հագներգութեանս գրեալ է, թե Արիդղեայ ըստ քաջութեանն ուժգին դարութեամբ արիանալով՝ երկիւղ եհաս Արամազդայ գուցե ստանց բախտագրութեան առցե Արիդղեայ զԻդիոն և այսպէս երկուցեալ յորգորէ զաստուածոն զի երթեալ իւրաքանչիւր ոք նոցանէ աւղենացէ ում և կամեսցի ոմանք եղղենացուցն սոցա այսպէս՝ յորդորելով Զեւսն որոտայր յերկնից և Պոսիդոն սասանէր զծով. իսկ զժողք ի շարժութենէ երկնի և ծովու զարհուրեցաւ գուցե ի սասնելայ երկնի վերապատառում լինիցի սանդարամետականացն և հրապարակեսցին իրք ներաւ Այլ տաղք են այսպես. «Զարհուրեալ

և հույները չէին կարողանում բաց ծով դուրս գալ: Արայական բանակի աստվածային գուշակ Կալքասը հայտնում է, որ աստվածուհու զայրույթը այն ժամանակ կմեղմվի, երբ ղոհարերվի Ագամեմնոնի դուստր Իֆիգենիան:

28 Պենելոպեն «Ոդիսականի» հերոսուհիներից է, Ոդիսևսի կինը, նրա որդու անունն է Տելեմաք:

29 Կ ու ն, Հին Հունաստանի լեզնագետներն ու առասպելները, Երևան, 1956:

30 Տ ե' ս Հ ո մ եր ո ս, Իլիական, Երևան, 1955, երդ 15, տող 262—265, թարգմ. Հ. Համբարձումյան:

յաթուռոյ վազէր եւ հեծեծէր, գուցէ գնորա ստորերկրե այս վերապատանեցէ Պոսիգոն երկրաշարժ»³¹։

Որ այս զրույցների աղբյուրը Հոմերոսը ինքն է, հաստատում են թեկուզ աստվածներին և հերոսներին տրվող էպիտետները։ Այսպես՝ ձեռագրերում ես, ինչպես Հոմերոսի մոտ, Հերան «նենգամիտ» է որակվում, Պոսեյդոնը՝ «երկրաշարժ», Զևսը՝ «ամենակալ» և այլն։ Վերոհիշյալ միտքը հաստատող մի այլ օրինակ է Դիոմեդի մասին պատմվող զրույցը։ Այստեղ ձեռագրի հեղինակը որպես համեմատության գեղեցիկ օրինակ նշում է Հոմերոսի կողմից հերոսին ձիու հետ համեմատելու փաստը։ Հոմերոսը «Իլիականի» «Դարձյալ փախուստ նավերից» գլխում գրում է.

Ինչպես մի ձի բազմախնամ, մսուրի մոտ դարին կերած,

Փոկը կտրած բռնում է դուրս դաշտը դոփում ուռտրնդոստ³²։

Ձեռագրի հեղինակը օգտագործում է ճիշտ նույն համեմատությունը, երբ բնութագրում է Դիոմեդի քաջագործությունները. նա այնքան քաջ է ու հզոր, որ մարտի պահին հարձակվում է թշնամու վրա «ինչպես երիվար ոմն ուժգին պատարեալ և որոտացեալ առ մսուր...»³³։

Այսպիսով, հայերեն ձեռագրերում հիշվող այն հունական առասպելները, որոնց աղբյուրը Հոմերոսն է, պատմվում են բավականաչափ հարազատ հունական պատումներին և վկայում են այն մասին, որ ձեռագրի «գրիչը» քաջ ծանոթ է եղել հունական դիցաբանությանը։

Ամփոփելով պետք է նշել, որ միջնադարյան հայ պոեզիայի մեջ հունական դիցաբանությունն ու գրականությունը իրենց արժանի տեղն ունեն։ Հոմերոսն իր մեծությամբ գիտակցվել է և ընդունվել որպես հեղինակություն։ Ամենայն հավանականությամբ նրա բանաստեղծական արվեստը ուսուցվել է համապատասխան դպրոցներում։

Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄԵՏԱՎԱԶՈՒԼՈՒԹՅԱՆ ԱԹԱՋԻՆ ՓԱՍՏԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀՈՒՄ ՀՆԱԳՈՒՅՆ ԲՐՈՆՁԻ ԳԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

Հայկական լեռնաշխարհի ղեռ շատ չնուց յայտնի է եղել իր բնական հարստություններով մասնավորապես մետաղների հանքերով։ Հին Արևելքի մի շարք երկրներ այնտեղից ներմուծել են պղինձ ու այլ մետաղներ։ Շումերացիներն օգտվել են Հայկական լեռնաշխարհի, Փոքր Ասիայի և Օմանի պղնձահանքերից։ II հազ. մ. թ. ա. Հին Արևելքի շրջանների մեջ պղնձի պաշարներով հատկապես աչքի է ընկել Մուսասիրը (Ջուլամերկի լեռներում), որն առաջին տեղն է բռնել իր հանքերի մշակմամբ և սրտահանումով, Շուպրիան (Սասունի լեռները) առաջին տեղն է գրավել անագի պաշարներով¹։ Հույն պատմագիրները (VI դ. մ. թ. ա.) բազմաթիվ հետաքրքրական տեղեկություններ են հաղորդում իրենց ժամանակակից և ավելի հին շրջաններում Հայկական բարձրավանդակում հանքանյութերի հանույթի և մետաղի մշակման վերաբերյալ։ Ստրաբոնը վկայում է Սպերում գոյություն ունեցող ոսկու հանքերի և նրան հարևան հաղտիքի երկաթով և արծաթով հարուստ հանքերի մասին ու նշում, որ այստեղ ապրող լեռնացիները հիմնականում զբաղվում են այդ հանքերի մշակությամբ²։ Հետաքրքրական տեղեկություններ են պահպանվել նաև հայ մատենագիրների և արաբ պատմիչների մոտ։ Ռշտունյաց լեռները, որոնք հարուստ են մետաղներով, անվանվել են երկաթահատների և կապարահատների լեռներ։ Փավստոսը վկայում է, որ Հակոբ Մծրնեցիի գալով Հայաստան «Գայր հասաներ լեռն երկաթահատացն և կապարահատացն և որ ընդ նմայն էին, ընդ Ըորշտունիս»³։ Կա-

¹ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. N° 2110, էջ 50ա։



² Հոմերոս, Իլիական, երգ 15, տող 262—263։

³ Մատենադարան, ձեռ. N° 2101, էջ 52ա։

¹ Н. Я. Янковская, Некоторые вопросы экономики Ассирийской державы ВДИ, 1956, № 1, էջ 36—37։

² Ստրաբոն, գիրք ԺԱ, գլ. ԺԴ, Հ. Աճառյանի թարգմանությամբ, Երևան, 1940, էջ 61։

³ Փ. Բուզանդ, Մատենագրություն նախնեաց, Վենետիկ, 1832, էջ 24։



Նկ. 1. Կոթնային օղակաձև կաշվի կաղապար Գանձիկից

դանկատվացին ես վկայում է. «Առաքեաց իշխանն հիւսիսոյ զործակալս ի վերայ ազգի ազգի արուեստագործաց, որք զգիտութիւն ոսկէծնութեան և արծաթահալութեան և երկաթահանութեան և պղնձագործութեան ունէին»⁴։ Այս բոլոր փաստերը վկայում են, որ Հայկական բարձրավանդակի վերը նշած շրջանները դեռ հնուց մասնագիտացել են պղնձի և այլ մետաղների հանույթի, մշակման և արտահանման մէջ։

Այսպիսով, Հայկական լեռնաշխարհի մետաղագործության առաջընթացի համար բազա են ծառայել ինչպես բարենպաստ բնական պայմանները և Հին Արեւելքի քաղաքակիրթ երկրների հետ փոխադարձ կոլտուրական կապերը, այնպես էլ աշքի ընկնող նվաճումները երկրագործության և անասնապահության ասպարեզում հնագույն բրոնզի դարաշրջանում։ Միաժամանակ հնագույն բրոնզի դարաշրջանում տնտեսության մէջ մետաղե գործիքների՝ կացնի և մանգաղի ներդրումը իր հերթին խթանեց այդ կոլտուրայի առաջընթացին։

Հայաստանում հնագույն բրոնզի դարաշրջանում մետաղամշակման, մետաղաձուլության գոյութիւնը վկայող փաստերից մեկը դա կացնի կաղապարի և հալոցների հայտնաբերումն է Կառնիում 1961 թ. պեղումների ժամանակ (Պետ. պատմ. թանգարան, ինվ. № 2234, 150)։ Կաղապարը (նկար 1) գտնվեց 2,5 մ խորութեան մէջ, կլոր կացարանի հետքում, մուտքից ձախ, մոտ կես մետր բարձրութիւն, 40 սմ լայնութիւն և 1 մ երկարութիւն ունեցող նստարանի վրա, մոխրաշերտում, բազմաթիւ այլ իրերի հետ։ Նրա կողքին գտնվեցին ոսկրե հերուններ և ասեղ, կալն թեղիկի զուխ, մանկական սայլի անիւ, ներճկված փոսիկներով զարդարված սև փայեցրած խեցեղեն (նկ. 2, ձախ կողմի վերևում)։ Հայտնաբերվել է երկփեղկանի կաղապարի մեկ փեղկը։ Այն մեջտեղից կիսված էր երկու մասի, և մի կտորը մյուսից մոտ 30 սմ հեռավորութեան վրա գտնվեց (այժմ վերականգնված է)։ Երկարութիւնը 17 սմ է, իսկ լայնութիւնը՝ 7 սմ։ Պատրաստված է հրակայուն թրծած կավից։ Մակերեսը հորիզոնական կտրվածքում երեք կողմից տափակ է, լավ հղկած, կոկած, որպեսզի երկրորդ փեղկը լավ նստի վրան, իսկ շորորող կողմն ուժեղ թեքվում է դեպի ներս և հարմարեցված է հալված մետաղը կաղապարի մէջ լըցնելու և զազերը միջից դուրս գալու համար։ Կաղապարի կոթառի և բերանի կողմերում արված են մեկական կլոր, փոքր անցք, որոնք ծառայել են երկու փեղկերը սեպիկներով իրար միացնելուն։ Այս կաղապարով ձուլվել է կոթառով սեպածն կացին, որի գիպսն օրինակի երկարութիւնը 11 սանտիմետր է։ Կացնի վերին եզրը կլոր գծով դեպի դուրս է ճկվում, բայց ոչ շատ ուժեղ շեշտված։ Կոթառի մոտ լայնութիւնը 3,5 սմ է, իսկ բերանի մոտ՝ 4 սմ։ Կոթառի դրսւն եզրը մի փոքր դեպի ներս է ճկված և կարճ է, մոտ 3 սմ երկարութիւն ունի։ Այսպիսով, կացինը կոթառի վերջում ավելի նեղ է (3 սմ), քան բերանի մոտ (4 սմ)։

Կոթառի վերին ձախ մասում կաղապարի վրա $3/4$ տրամագծով կիսաշրջանաձև փորվածք է արված, որի օգնութեամբ ստացվել է կոթառի անցքը։ Կաղապարի խորութիւնը կոթառի մոտ՝ 8 սմ է, բայց դեպի բերանն այդ խորութիւնը աստիճանաբար նվազում և շափաղանց աննշան դառնում. այս հանգամանքը ապացուցում է կացնի սեպածն լինելը։ Կոթառի անցքը կլոր է և ունի 2,8 սմ տրամագիծ։


Կառնիում մետաղաձուլության գոյութիւնն ապացուցող փաստերից են կալն հալոցները, որոնք հայտնաբերվեցին կլոր կացարանի դրսի պատի տակ, մոխրով և կենդանիների այրված ոսկրներով հարուստ շերտում։ Այդ հալոցները սովորական կալն լայնաբերան մեկկանթանի լճուճներ են, ուռուցիկ փորով, դեպի ցած կոնաձև նեղացող ներքնամասով (որն ուռուցիկ փորի հետ բիկոնաձև սուր ելք է կազմում) և ներճկված փոքր հատակով։ Բոլորը ներսից ունեն մետաղի և շլակի հետքեր։ Կալը կրակի ուժեղ ազդեցութիւնից այրվել, շորացել է, փայլը և դույնը կորցրել։ Նման հալոցների մոտ ինք տարրեր բեկորներ են հայտնաբերվել։ Բոլորն էլ արտաքինից զարդանախշված են, ունեն օկլինֆ-ներճկված սպիրալներով և Շենգավիթի խեցեղենին բնորոշ ուղղագիծ երկրաչափական զարդանախշեր (նկ. 2, ձախ կողմի ներքևում)։ Այնուամենայնիվ, այս հալոցներն իրենց զարդանախշումով, մասամբ նաև ձևով, տարբերվում են կաղապարի հետ գտնված խեցեղենից։

Կառնիում հնագույն բրոնզի դարաշրջանի մյուս կարևորագույն հայտնագործութիւններից մեկն էլ պղնձե մանգաղն է (ՊՊԹ, 1964/35)5։ Այն հայտնաբերվել է 1950 թ., 2,10 մ խորութեան մէջ, մակույկաձև աղորիթի, ներճկված փոսիկներով սև փայեցրած խեցեղենի (էլարի

⁴ Մոսխիսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1913, էջ 190։

⁵ Б. Н. Аракелян, Гарни, т. I, Ереван, 1951, էջ 25, նկ. 12։ Պետական պատմական թանգարանը տեքստում գրվում է ՊՊԹ։

տիպի) և պայտաձև օջախի բեկորի հետ միասին: Թերի է, ունի աղեղնաձև իրան և կարճ պոփայտե (գուցե և ոսկրե) կոթառ ամրացնելու համար: Մանգաղը ձուլվելուց հետո ենթարկվել է սառը կռման, որի հետքերն ականառու են:



Նկ. 2. Գառնիում հայտնաբերված խեցեղեն, էլարի դամբարաններից հայտնաբերված դաշույններ և էջմիածնում հայտնաբերված կախակոթառ կացին:

Գառնիում հայտնաբերվել են նաև կայծքարից մանգաղի ներդիրներ, սակայն ընդամենը 2—3 օրինակ, որոնց սակավությունը կարելի է բացատրել արդեն մետաղե մանգաղների ասպարեզ գալով, որը տեխնիկապես մի նոր առաջընթաց էր:

Այսպիսով, թեև Գառնիում մետաղաձուլական վառարաններ դեռևս չեն հայտնաբերվել, բայց կացնի կաղապարի, հալոցների ու մանգաղի գյուտը հավաստում է մետաղադործության դարգացման սկիզբը Հայաստանում, հնագույն բրոնզի դարաշրջանում, ապացուցում կոթառով

սեպածե կացնի արտադրությունը տեղում և հաստատում, որ այդ շրջանում մետաղի սառը ձևով կոման հետ աստիճանաբար սկսվում է նաև նրա ձուլումը:

Գառնիի հնագույն բրոնզի մշակույթի մանրամասն ուսումնասիրությունը պարզում է, որ իր մի շարք հատկանիշներով, մետաղաձուլության գոյությունը և հատկապես խեցեղենի կատարման տեխնիկայով, ձևերով, զարդանախշման եղանակով այն սերտորեն առնչվում է հնագույն բրոնզի դարաշրջանի հուշարձանների և հատկապես էլարի հետ, բայց միաժամանակ խեցեղենի մի որոշակի խմբով կապվում է Շենգավիթի հետ (հիմնականում զարդացած գծային հրկրաչափական և արդեն թույլ արտահայտվող ուլյեթ-ներեկված զարդանախշեր): Այս հանգամանքը ենթադրել է տալիս, որ կամ Գառնիում հավանաբար գոյություն ունեն երկու տարբեր շերտեր, որոնցից մեկը Շենգավիթի վերը նշած խեցեղենին է ժամանակակից (գուցե հուշարձանի այդ շերտի վատ պահպանվածության և դեռևս ոչ ծավալուն պեղումների հետևանքով հնարավոր չէ շերտերը հստակորեն միմյանցից անջատել), կամ էլ Գառնիի ստորին շերտը հիմնականում էլարի տիպի է, բայց ունի որոշ անցման հատկանիշներ՝ Շենգավիթից դեպի էլարը:

Հայաստանում մետաղաձուլության գոյությունը վկայող մյուս կարևորագույն ապացույցը Շենգավիթի 1937 թ. պեղումների ժամանակ հայտնաբերված կացնի կաղապարն է (ՊՊԹ, ինվ. № 1412/4): Այն գտնվել է պեղվող հրապարակի կենտրոնական մասում, հում աղյուսով կառուցված № 2 կլոր կացարանի կենտրոնում, հատակին, կավե թրծած օջախի կողքին: Պատրաստված է սպիտակ կրաքարից:

Շենգավիթի կաղապարի մի շարք հատկանիշներ (օրինակ՝ երկու փեղկերն իրար միացնելու համար արվող անցքերի բացակայությունը, կոթառի համար անցքի պրիմիտիվ փորվածքը, ապա հաված մետաղը կաղապարի մեջ լցնելու հարմարանքի բացակայությունը) ենթադրել են տալիս, որ Շենգավիթի կաղապարն ավելի արխայիկ ձև ունի, իսկ Գառնիի կաղապարը նրա համեմատ ավելի կատարելագործված է:

Հայաստանում հայտնաբերված կոթառով սեպածե կացնի միակ օրինակը գտնվում է Լենինականի գավառագիտական թանգարանում⁸: Հայաստանում հայտնաբերվել են կոթառով սեպածե կացիներ նաև քարից⁹: Դրանցից մեկը գտնվել է Լենինականի շրջանում՝ Քեթի գյուղի մերձակայքում¹⁰, երկրորդը՝ Ղանլիջա գյուղում (Ախուրյանի շրջան)¹¹ և երրորդը՝ էջմիածնի շրջանում (կանաչ դիրիտից)¹²: Այս բոլորն էլ պատահական են և ուղեկցող նյութեր չունեն: Քարե նման կացիներ հայտնաբերվել են Վրաստանում՝ Խիզանաանտ գոռայում¹³ և Հյուսիսային Կովկասում՝ Նովի-Արշտի բնակավայրի № 9 կուրգանում¹⁴: Կոթառով կացնի կաղապար հայտնաբերվել է նաև Նախիջևանի Քյուլ-Քափայում¹⁵: Կոթառով սեպածե կացիների մի քանի օրինակներ հայտնաբերվել են Վրաստանում՝ հատկապես Արևելյան Վրաստանում (Ջագեսում)¹⁶, Հարավային Օսեթիայում (Յալբուգիում և Կուլբակերիում)¹⁷ և Մառնեուլի շրջանում (Բրդա-

* Б. Б. Пиотровский, Поселения медного века Армении, СА, XI, 1949, էջ 172; А. А. Мартиросян, К предыстории древнейших этапов культуры Армении, «Պատմա-բանասիրական հանդես», 1960, № 1, էջ 92, նկ. 1:

7 Բ. Բ. Պիոտրովսկի, նշվ. աշխ., էջ 172:

8 Հ. Ա. Մարտիրոսյան, նշվ. աշխ., էջ 92—93, նկ. 2:

* Е. А. Байбуртян, Новые находки каменного века в Армении, СА, 1937, № 3, էջ 206:

10 Ե. Ա. Բայբուրտյան, նշվ. աշխ., էջ 208, նկ. 1: Նույնի՝ Աշխատանքային գործիքները հին Հայաստանում, ՀԽՍՀ Պատմության և գրականության ինստիտուտ, «Տեղեկագիր», 1-ին դիրք, 1938, էջ 196, նկ. 5:

11 Е. А. Байбуртян, Новые находки каменного века в Армении, էջ 208, նկ. 2:

12 Նույն տեղում, էջ 208, նկ. 3:


13 О. Джапаридзе, К истории грузинских племен на ранней стадии медно-бронзовой культуры, Тб., 1961, էջ 259:

14 Р. М. Мунчаев, Древнейшая культура Северо-Восточного Кавказа, МИА, № 100, М.—Л., 1961, էջ 55—56, նկ. 11, աղ. III—7:

15 Նույն տեղում, էջ 57:

16 Б. А. Куфтин, Археологические раскопки в Тriaлеги, Тб., 1942, էջ 10, նկ. 5:

17 Նույնի՝ Археологическая маршрутная экспедиция 1945 года в Юго-Осетию и Имеретию, ИАН Груз. ССР, Тб., 1949, էջ 36, աղ. XX:



նկ. 3. Զենքեր և զարդեր էլարի դամբարաններից

ձորում)¹⁸։ Բ. Կուֆտինը Ջադեսի կացինը և նրա հետ դոնվաթ տեղի ծայրը թվագրում է III հազարամյակի II կեսով մ. թ. ա. 19, Գ. Լ. Կորիձեն՝ III հազարամյակի կեսերով մ. թ. ա. 20, իսկ Օ. Ջափարիձեն՝ III հազարամյակի վերջով և II հազարամյակի սկզբով մ. թ. ա. 21, Կուլ-բակերիի կացինը Վ. Պ. Լյուրինը թվագրում է III հազարամյակի վերջով և II հազարամյակի սկզբով մ. թ. ա. 22, Օ. Ջափարիձեն Բրդաձորի կացինը համարում է ավելի երիտասարդ, քան Յալրուդիի և Կուլբակերիի կացինները²³։

Արխաիկ տիպի տեղի ծայրեր հայտնաբերվել են նաև Հայաստանում, որոնցից մեկը գտնվում է Լենինականի դավառադիտական թանգարանում²⁴, իսկ մյուսը հայտնաբերվել է Կիրովականում²⁵ (ՊՊԹ, ինվ. 1236/82)։ Հ. Մարտիրոսյանը Լենինականի տեղի ծայրը համեմատում է Սախերիի տեղի ծայրի հետ. այն, ինչպես և Հայաստանի ֆոնդերում պահվող Սախերիի տիպի մետաղե իրերը, վերագրում է բրոնզի հնագույն փուլին և թվագրում III հազարամյակի II կեսով մ. թ. ա. 26։

Վրաստանի վերը նշած կոթառով սեպածե կացինները պատահական դյուտեր են, ուղեկցող նյութեր չունեն (բացի Ջադեսի կացնից, որի հետ դոնվել է տեղի ծայրը), իսկ Գառնիի կաղապարը հայտնաբերվել է ուշ էնեոլիթյան կամ հնագույն բրոնզի դարաշրջանի շերտում, կլոր կաղապարում, էլարի տիպի խեցեղենի հետ։ Այս բոլորը հնարավորություն են տալիս Գառնիի կացնի կաղապարը թվագրել XXIV—XXII դդ. մ. թ. ա.։

Հայկական լեռնաշխարհում հայտնաբերված կոթառով սեպածե կացնի կաղապարները, կացինները և Վրաստանի կացինները օրինաչափորեն իրենց դուզահեռներն ունեն ինչպես հաշավում, այնպես էլ Հյուսիսային Կովկասում։ Սակայն Հայաստանում և Վրաստանում հայտնաբերվածների համեմատությունը պարզում է նրանց ինքնատիպությունը և որոշ նրբին տարբերությունները. այսինքն հավաստում է տեղական ծագումը, շնայած նրանց նախատիպերը կան Երևանում։ Նման կացիններ և նրանց կավե մոդելներ, որոնք ժամանակի տեսակետից նախորդել են մեր կացիններին, հայտնաբերվել են Ուրում և Ջեմդեթ-Նասրում²⁷։ Հյուսիսային Կովկասի կուրանյան մեծ կուրգաններում նրանք հանդիպում են վաղ կուրանյան կուլտուրայի երկու կոմպլեքսներում՝ մայկոպյան էտապում²⁸ և նովոսվորոդնոյի էտապում (Մախուկադի, Անդրուկովսկի և Պսերայսկի կուրգաններում)²⁹, որոնք Ա. Ա. Ինսսենը թվագրում է III հազարամյակի վերջով և II հազ. սկզբով (2300—1700 թթ. մ. թ. ա.)³⁰։

В. П. Любин, Археологическая разведка в окрестностях Сталинири (Юго-Осетия), КСИИМК № 60, 1955, М., էջ 15—16, նկ. 14։

¹⁸ Д. Л. Коридзе, Новые находки медных орудий в Квемо-Картли, СА, 1958, № 1, էջ 138, նկ. 24։

¹⁹ Б. А. Куфтин, Археологические раскопки в Триалети, էջ 15։

²⁰ Գ. Լ. Կորիձեն, նշվ. աշխ., էջ 139։

²¹ Օ. Ջափարիձեն, նշվ. աշխ., էջ 264։

²² Վ. Պ. Լյուրին, նշվ. աշխ., էջ 22։

²³ Օ. Ջափարիձեն, նշվ. աշխ., էջ 259։

²⁴ Հ. Ա. Մարտիրոսյան, նշվ. աշխ., էջ 95, նկ. 5։

²⁵ Կ. Ղաֆազարյանի պեղումները Կիրովականում, Հ. Մարտիրոսյանի նշվ. աշխ., էջ 97—98, նկ. 6։

²⁶ Նույն տեղում, էջ 97։

²⁷ E. Mackay, Report an Excavations at Jemdet Naser, Fild Museum of Nat. Hist. Anlir. Mem., v. 13, Chicago, 1931, աղ. LXXV, էջ 266, G. Child, New Light on the Most Ancient East, London, 1935, էջ 141։ Նույնի՝ Eurasian Stafthole-axes, ESA, IX, Helsinki, 1934, էջ 159։ Նույնի՝ Древнейший Восток в свете новых раскопок, М., 1956, էջ 209։ V. Christian, Altertumskunde des Zweistromlandes, Leipzig, 1940, էջ 158։ O. Montelius, Die alte kulturperioden in Orient und in Europa, II, Stockholm, 1916—1923, էջ 172, նկ. 369։

²⁸ А. А. Нессен, К хронологии „Больших кубанских курганов“, СА, в. XII, 1950, էջ 173, աղ. 1։

²⁹ Նույն տեղում, էջ 173, աղ. II։

³⁰ Նույն տեղում, էջ 193։

Այսպիսով Անդրկովկասը, առաջին հերթին՝ Հայկական լեռնաշխարհը, գտնվելով Միջագետքի և Հյուսիսային Կովկասի միջև, հանդիսացել է հին արևելյան քաղաքակրթության նվաճումների փոխանցողը դեպի հյուսիս:



Նկ. 4. Խեցեղեն էլարի դամբարաններից

Բացի վերը նկարագրած կացիններից, Հայաստանում մետաղագործության զարգացման արշալույսին է վերաբերում նաև կացինների մի այլ տեսակը, այսպես կոչված կտցավոր կացինը: Այս ունիվերսալ գործիքի առաջին հոյակապ օրինակը գտնվել է Ալավերդում 1931 թ. (ՊՊԽ, ինվ. № 75916)³¹, նման մի կտցավոր կացին կարմիր պղնձից գտնվում է Լենինականի

³¹ Ե. Բ. Կուֆտին, Աշխատանքային գործիքները հին Հայաստանում, էջ 230, նկ. 87; Б. А. Куфтин, К вопросу о древнейших корнях грузинской культуры на Кавказе по данным археологии, «Вестник Гос. музея Грузии», в. XII, Тб., 1944, էջ 300, Հ. Մարտիրոսյան, նշվ. աշխ., էջ 90—100, նկ. 8:

դավառագիտական թանգարանում³²։ Կտցավոր կացիները հայտնաբերվել են նաև Վրաստանում³³։ Այս կացիների ծագման հարցը շոշափելիս Բ. Կուֆտինը նշում է, որ նման տիպի կացիներն Անդրկովկաս են թափանցել Առաջավոր Ասիայից։ Նա այդ կացիները մի կողմից համեմատում է ասսուրական կացիների հետ, մյուս կողմից՝ նարամսինի բարձրաքանդակի (XXIII դար) ակկադական մարտական կացնի հետ³⁴։ Հ. Մարտիրոսյանը Անդրկովկասի այդ կացիների ամբողջ խումբը թվագրում է III հազարամյակի վերջերով³⁵։ Խեթական մի շատ կարևոր արձանագրությունից պարզվում է, որ նարամսինն իր արշավանքների ժամանակ Ակկադիին է ենթարկել 17 երկրների թագավորներին³⁶, որոնց թվում նաև Հայկական լեռնաշխարհի հարավային մասում (Դիարբեքի շրջանում)³⁷ գտնվող Ուլլիլի երկրի ցեղային միության թագավորին³⁸։ Այս փաստն ապացուցում է, որ հենց այդ ժամանակ էլ ակկադական մարտական կացիներ թափանցել է Հայկական լեռնաշխարհ։ Հետևաբար Անդրկովկասում հայտնաբերված կտցավոր կացիների խումբը կարելի է թվագրել նարամսինի արշավանքների ժամանակով՝ այսինքն XXIII դ. մ. թ. ա.։

Հայաստանում հնագույն բրոնզի դարաշրջանի կարևորագույն հայտնագործություններից են նաև 1961 թ. մեր կողմից էլարի դամբարանների պեղումների ժամանակ հայտնաբերված բրոնզե դաշույնները, դանակը, տեղի ծայրը և սպիրալաձև ապարանջանները։ Այս զենքերն ու դարդերը հայտնաբերվել են սալարկղենում և կավածեփ գրունտային դամբարաններում, աջ կողքի պառկած կծկած ոտքերով կմախքի, սև փայլեցրած կլոր և ձվաձև փոսիկներով ու խուլ կանթերով զարդարված խեցեղենի հետ, որոնք վրի հիմքում ունեն կիսաշրջանաձև կանթեր և շուրթի հետ եռանկյունաձև հրապարակ կազմող երկթե կանթեր (նկար 4)։ № 30 դաշույնի մի մասն է պահպանվել։ Դաշույնը տափակ է, եռանկյունաձև իրանով, թեք ուսերով և նեղ, երկար պոչով (նկ. 2, աջից առաջինը)։ Ուսերին պահպանվել են փայտե կոթառի հետքերը։ Պահպանված մասի երկարությունը 9,2 սմ է, լայնությունը՝ 3,3 սմ։ № 73 դաշույնը ամբողջական է, չափերով մեծ է № 30 դաշույնից։ Ունի տափակ, ձվաձև իրան, թեք ուսեր և լայն, տափակ պոչ (նկ. 2, աջից երկրորդը)։ Դաշույնի երկարությունը 17,5 սմ է, լայնությունը՝ 4 սմ։ Էլարի № 35 դանակը փետուրի ձև ունի, առանց պոչի է, հազիվ նկատելի կենտրոնական մեջքով։ Երկարությունը 10,5 սմ է, լայնությունը՝ 2 սմ (նկ. 3, ձախից առաջինը)։ Այս դանակից մի փոքր հեռու, № 15 դամբարանի մոտ հայտնաբերվեց ճիշտ նման դանակ հասպիսից (նկ. 3, ձախից երկրորդը)։ Տեղի ծայրը (№ 64) տերևաձև է, կարճ և տափակ պոչով, երկարությունը 9,5 սմ է, լայնությունը՝ 2,5 սմ (նկ. 3, աջից առաջինը)։

Այսպիսով, այո բոլոր զենքերը տափակ են, երկկողմանի սուր եզրերով։ Քիմիական անալիզից պարզվում է, որ պատրաստված են մկնդեղային բրոնզից, որում մկնդեղը կազմում է 1,5—4 տոկոս։ Մետաղագրական անալիզը ցույց է տալիս, որ նրանք ձուլվել են և ապա ենթարկվել սառը կռման, ընդ որում սառը կռման ենթարկվել է իրեն ամբողջությամբ³⁹։

Էլարում հայտնաբերված վերը նկարագրած զենքերն իրենց զուգահեռներն ունեն ոչ միայն Հայկական լեռնաշխարհում, այլ ընդհանրապես Անդրկովկասում և Հյուսիսային Կովկասում։ Էլարի № 30 դաշույնի տիպի դաշույն հայտնաբերվել է Արարատյան դաշտավայրում (ՊՊԹ 712/1)։ Ընդհանրապես № 30 և 73 դաշույններն ունեն կատարելագործված ձևեր և հանդիսանում են II հազարամյակի I կեսի (մ. թ. ա.) մի շարք դաշույնների նախատիպը, օրինակ՝ Զանգեզուրի (ՊՊԹ 962/12), Մեղրիի (ՊՊԹ 124/2), Էլարի (127/421) և Կարմիր Վանքի (կծկը-

³² Նույն տեղում, էջ 99, նկ. 7։

³³ Բ. Ա. Կուֆտին, նշվ. աշխ., էջ 300, նկ. 62, Դ. Լ. Կորիձե, նշվ. աշխ., էջ 134—135, նկ. 1։

³⁴ Բ. Ա. Կուֆտին, նշվ. աշխ., էջ 301։

³⁵ Հ. Մարտիրոսյան, նշվ. աշխ., էջ 99։

³⁶ B. Hrozný, Naram-sin et ses ennemis d'après un texte Hittite, „Archiv orientální“, 1929, vol. 1, № 1, էջ 65—76։

³⁷ E. Forrer, Die Provinzeinteilung des assurischen Reiches, Leipzig, 1921, էջ 85։
Վ. Զրոգնի, նշվ. աշխ., էջ 68։

³⁸ Լ. Ա. Բարսեղյան, Հնագույն ցեղային միությունը Հայաստանում, Հայկ. ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1962, № 1, էջ 88—89։

³⁹ Անալիզները կատարված են Հենինգրադի Հնագիտության ինստիտուտի լաբորատորիայում՝ Դ. Նաումովի և Վ. Սիդորովի կողմից, որոնց իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում։

ված կմախքով և դունագարդ խեցեղենով դամբարաններից)⁴⁰, № 73 դաշույնը նախատիպն է միջին բրոնզի շրջանի ավելի կատարելագործված դաշույնների, օրինակ՝ Կիրովականի կուրգանից հայտնաբերված (ՊՊԹ 1860/56) և Թրիալեթի № № 15 և 17-րդ դամբարաններում հայտնաբերված դաշույնների⁴¹, էլարի № 35 դաշույնի տիպի դաշույն հայտնաբերվել է Կարադինո-Բալկարիայում, Նալչիկի շրջանում 1928 թ. պեղված «Սադկա» կուրգանում, որը Ա. Մ. Իեսսենը վերագրում է Կուրանյան մեծ կուրգանների Մայկոպյան շրջանին և թվագրում 2300—1900 թթ. մ. թ. ա.⁴², էլարի տեղի ծայրն իր համանունն ունի Փարավանի № XI կուրգանում, որը Բ. Կուֆտինը վերագրում է հնագույն բրոնզի ուշ շրջանին և թվագրում III հազարամյակի վերջով յ. թ. ա.⁴³, Սակայն Փարավանյան կուրգանի ղեկավարը, և ընդհանրապես Թրիալեթի հնագույն բրոնզի դարաշրջանի կուրգանային խեցեղենն ունեն ավելի զարգացած ձևեր, քան էլարինը։ Թաղման ձևերն էլ այլ են։ Հետևաբար, էլարի դամբարանները նախորդել են Թրիալեթի հնագույն բրոնզի կուրգանային թաղումներին։ Այսպեսով, էլարի դամբարանային կուլտուրան կա-
րելի է վերագրել հնագույն բրոնզի շրջանին և թվագրել XXIII—XXII դդ. մ. թ. ա.:

Դամբարանային կառուցվածքով, թաղման ձևով և նյութերով, հատկապես խեցեղենով, էլարին շատ նման են՝ 1) Ծալկայի շրջանի Բարմակսիդի խճուղու սալարկղային դամբարանը⁴⁴, 2) 1948 թ. Բ. Կուֆտինի կողմից Օզնիում պեղված էլարի տիպի խեցեղենով, սպիրալաձև ապա-
րանքաներով, սպիտակ խողովակաձև ուլունքներով մանկական սալարկղային դամբարանները⁴⁵, և Կիկեստի՝ նույնպես Բ. Կուֆտինի կողմից 1948 թ. պեղված Ուխարի ճանապարհի № 5 դամ-
բարանի խեցեղենը⁴⁶։ Մեծ նմանություններ են նկատվում նաև էլարի և պատմական Հայաս-
տանի տերիտորիայում՝ Էրզրումի մոտ՝ Կարագի բնակատեղիում հայտնաբերված ղեկերը հա-
մեմատելիս⁴⁷, Կարագի B, 1 շերտում, 4—4,5 մ խորության մեջ հայտնաբերվել են բրոնզե
դաշույն, տեղի ծայր, կախակոթառ կացին և սև փայլեցրած խեցեղեն⁴⁸, Կարագի դաշույնը նման
է էլարի № 30 դաշույնին, միայն չափերով մի քիչ մեծ է⁴⁹։ Արտակարգ նման են նաև տեղի
ծայրերը, սակայն Կարագինը դարձյալ մեծ է էլարինից⁵⁰։

Վերը նկարագրած կոթառով սեպաձև կացինների զարգացումը հնագույն բրոնզի վերջին
շրջանում հանգեցնում է կախակոթառ կացինների, որի ամենավաղ օրինակներից մեկը Կարագի
կացինն է⁵¹։ Իր ձևով այն մի կողմից նմանվում է կոթառով սեպաձև կացիններին՝ ունի
երկարավուն, համաչափ, լայն սեպաձև իրան, մյուս կողմից կոթառն արդեն կախ է։ Վերը
նկարագրած սեպաձև կացինների համեմատ ավելի մասսիվ է⁵²։ Կախակոթառ կացնի մեկ այլ
օրինակ հայտնաբերվել է Արարատյան դաշտավայրում (ՊՊԹ, ինվ. 75/53, նկ. 2, ներքևում)⁵³։
Այն իր արտաքին ձևով մի փոքր տարբերվում է Կարագի կացնից։ Իրանը կոթառի մոտ նկատ-

⁴⁰ А. А. Спицын, Некоторые Закавказские могильники, ИАК, вып. 29, СПб. 1909, էջ 4, նկ. 38, 39, 41, 42:

⁴¹ Б. А. Куфтин, Археологические раскопки в Триалети, էջ 443, աղ. СУ.

⁴² А. А. Иессен, Археологические памятники Кабардино-Балкарии, МИА, № 3, 1941, М.-Л., էջ 17, նկ. 23, նույնի՝ К хронологии Больших кубанских курганов, էջ 163, 163:

⁴³ Բ. Ա. Կուֆտին, նշվ. աշխ., էջ 101, 467, աղ. CXV:

⁴⁴ Նույն տեղում, էջ 116—117, նկ. 125, 126 ա, б:

⁴⁵ Б. А. Куфтин, дневник, Триалетская Археологическая экспедиция, 1948, էջ 21. Նյութերը հրատարակված չեն, տե՛ս Վր. պետ. թանգարան, ինվ. 248—258:

⁴⁶ Նույն տեղում, էջ 30, նյութերը հրատարակված չեն, տե՛ս Վր. պետ. թանգարան, ինվ. 40—58, 13, 14, 15: Նյութերին ծանոթանալու հնարավորություն տալու համար խորին շնորհակալություն եմ հայտնում Վրաստանի թանգարանի աշխատակիցներին:

⁴⁷ Н. З. Кочау—К. Т. Турфан, Erzurum-Karaz Kazisi Raporu-Belleten, Turk-Tarih kurumu, XXIII, 1959, № 91, էջ 409, նկ. а 174:

⁴⁸ Նույն տեղում, տե՛ս աղյուսակը վերջում:

⁴⁹ Նույն տեղում, էջ 377, 409, նկ. а 177:

⁵⁰ Նույն տեղում, էջ 377, 409, նկ. а 178:

⁵¹ Նույն տեղում, էջ 409, նկ. а 174: Т. Özgüç-М. Akok, Objets from Horoz-tepe, Belleten Turk-Tarih kurumu, 1957, № 82, նկ. 20:

⁵² Н. З. Кочау, նշվ. աշխ., էջ 376—377:

⁵³ Հ. Մարտիրոսյան, նշվ. աշխ., էջ 102, նկ. 9:

նում է, իսկ դեպի բերանը զնայով լայնանում էջմիածնի կացինը մի փոքր երկար է (17,5 սմ)՝ Կարագի կացնից, սակայն կոթառը նույնպես կախ է և համարյա նույն երկարություն ունի, ինչ որ Կարագինը։ Կարագի կացնի բերանը ավելի լայն է (5,4 սմ), քան էջմիածնինը (4,5 սմ)։ Էջմիածնի կացինն իր արտաքին ձևով ավելի կապվում է Արխաղիայի դոլմեններում և Հյուսիսային Օսեթիայում հայտնաբերված կացինների հետ։ Այն արտակարգ նման է Հյուսիսային Օսեթիայում հայտնաբերված Կ. Բ. Օլշեսկու կուկցիայի կացնին⁵⁴, Ե. Ի. Կրուպնովը նշում է, որ ըստ Բ. Ա. Կուֆտինի, ճիշտ նման կացին հայտնաբերվել է Կուրանյան կուրգաններում և գտնվում է Վիեննայի թանգարանում⁵⁵։ Նման երկու կացիններ, դարձյալ Հյուսիսային Օսեթիայից, հայտնաբերվել են Կորցի և Ֆաուկաուի դամբարաններում⁵⁶, սակայն սրանք ձևով մի փոքր տարբեր են էջմիածնի կացնից։ Էջմիածնի կացինն իր զուգահեռներն ունի նաև Արխաղիայում, Կյուր-Դեռեում՝ էշերիի դոլմեններում հայտնաբերված նյութերում, Արաձնիսյան ստանիցայի նյութերում⁵⁷, Բ. Ա. Կուֆտինը գտնում է, որ արխաղական և ընդհանրապես կովկասյան դոլմենները կառուցվել են հնագույն բրոնզից դեպի միջին բրոնզի անցման շրջանում և թվադրում է III հազարամյակի վերջով և II հազարամյակի սկզբով⁵⁸։

Այսպիսով, էջմիածնի կացինը թեև ուղեկցող նյութեր չունի, բայց առնչվում է մի կողմից Կարագի կացնի հետ, իսկ մյուս կողմից՝ Բ. Ա. Կուֆտինի թվագրած արխաղական դոլմենների ստորին շերտի ժամանակաշրջանի նյութերի հետ և, հավանաբար, երևան է գալիս էլարի տիպի կուլտուրայից անմիջապես հետո, այսինքն՝ հնագույն բրոնզից դեպի միջին բրոնզի անցման շրջանի նյութերի հետ։ Կարագի կացինը, համապատասխանելով էլարի կուլտուրայի վերջին շրջանին, փոքր-ինչ նախորդել է էջմիածնի կացնին։

Վերը բերված փաստերը, կացինների տիպերի զարգացման ժամանակագրական հաջորդականությունը հավաստելով, միաժամանակ նշում են կախակոթառ կացինների տարածման ուղղությունը հարավից հյուսիս։

Այսպիսով, ինչպես տեսանք, հնագիտական պեղումների միջոցով ձեռք բերված նյութերն ապացուցում են, որ Հայկական լեռնաշխարհում մետաղամշակման գործը զգալի հաջողությունների է հասնում հատկապես հնագույն բրոնզի զարաշրջանում, երբ պղնձի սառը կոռումն իր տեղը զիջում է նրա ձուլմանը քարե կամ կավե կաղապարներում, որով և սկիզբ է դրվում իսկական մետաղագործության զարգացմանը։ Այս փաստերն անտարակուսելի են դարձնում Հայկական լեռնաշխարհի՝ վերը նկարագրած նյութերի տեղական արտադրությունը։

Բերված զուգահեռները (Հին Արևելքի կուլտուրայի, Վրաստանի և Հյուսիսային Կովկասի նյութերի հետ) միաժամանակ ապացուցում են, որ Հայկական լեռնաշխարհը III հազարամյակի II կեսում սերտ փոխադարձ կապերի և փոխհարաբերությունների մեջ է եղել նշված երկրների հետ և հանդիսացել է մի կամուրջ, որի վրայով հարավի կուլտուրան փոխանցվել է հյուսիս։

Է. ԽԱՆՁԱԳՅԱՆ

ԽԱՅԱՍԱ-ԱԶԶԻԻ ՈՒ ՆՐԱ ՄԻ ՔԱՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՀԱՐՅԻ ՇՈՒՐՋԸ Խայասա-Ազզի (Haiaza-Azzi)

Խեթական աղբյուրների հաղորդած վկայությունները ցույց են տալիս, որ թե՛ քաղաքական, թե՛ տերիտորիալ առումով Խայասան և Ազզին իրենցից ներկայացնում են միևնույն երկիրը։ Այս համանմանությունը ականատես են երևում է Խեթական թագավոր Մուրսիլ II-ի տարեգրության մեջ, երբ հիշատակվում է այն մասին, թե ինչպես խեթական զորքերի հրամանա-

⁵⁴ Е. И. Крупнов, Материалы по археологии Северной Осетии, докубанского периода, МИА, № 23, 1951, էջ 39, նկ. 7_а։

⁵⁵ Բ. Ա. Կուֆտին, նշվ. աշխ., էջ 305, նկ. 8₃։

⁵⁶ Ե. Ի. Կրուպնով, նշվ. աշխ., էջ 38—39։

⁵⁷ М. М. Иващенко, Исследование арханческих памятников материальной культуры в Абхазии, Тифлис, 1935, էջ 15, 27—29, նկ. IX₁։ Б. А. Куфтин, Материалы по археологии Колхиды, I, 1949, Тб., էջ 288, табл. XXX₁, էջ 301, նկ. 63₃։

⁵⁸ Б. А. Куфтин, К вопросу о древнейших корнях грузинской культуры на Кавказе по данным археологии, էջ 303։

տար նուվանցան Ազգի երկրի մարդկանց Կաննուվարա քաղաքի տակ հաղթեց: Նույն տարե-
գրության մեկ այլ տեղում խեթական թագավորը արձանագրում է, որ նուվանցան Կաննուվա-
րա քաղաքի տակ հաղթեց հայասա երկրի մարդկանց¹: Այս համանմանությունն առաջին ան-
գամ նկատել է է. Ֆորերը², որին հետագայում նոր փաստերով պաշտպանեց Ա. Գյոտցեն³:

հայասա-Ազգիի ճիշտ տեղագրության հարցը մինչև այժմ էլ զիտական մեծ վեճերի տեղիք
է տալիս: Դեռևս 1931 թ. է. Ֆորերի հայտնած կարծիքը հայասա-Ազգիին Բարձր Հայքում տե-
ղադրելու մասին լայն ճանաչում է գտել արևելագետների մեծ մասի մոտ⁴:

Ելնելով Մուրսիլ 11-ի տարեգրության այն մասից, որտեղ պատմվում է հայասայի ծովի
ափին գտնվող Արիպսա քաղաքի մասին, արևելագետների մի որոշ մասը մինչև այժմ էլ հակ-
ված է հայասա-Ազգիին մերձայնատական շրջանում տեղադրելու 1927 թ. իր հոգվածներից մե-
կում Ա. Գյոտցեն հայասա-Ազգիին տեղադրում էր Տրապիզոնից հարավ-արևելք ընկած մերձ-
սևծովյան շրջանում⁵: Սակայն հետագայում իր մի շարք ուսումնասիրություններում վերանա-
յելով այդ տեսակետը, նա հայասա-Ազգիին տեղադրում է Եփրատ, Ճորոխ և Հալիս գետերի
ավազանում և վերջապես՝ միմիայն Եփրատի շրջանում⁶:

հաասա-Ազգիին Սև ծովի հարավային ափերին են տեղադրում նաև Լ. Դելապորտը⁷,
Ֆ. Կոռնելիուսը⁸, Ջ. Գարստանդը⁹ և շատ ուրիշներ:

Ֆ. Կոռնելիուսը գտնում է, որ Ազգիին Հայկական լեռնաշխարհում չպետք է տեղադրվի,
առավել ևս սխալ է այն կարծիքը, թե այն հարկավոր է որոնել Վանի ավազանում: Նա Ազգիին
տեղադրում է Սամսունի շրջանում¹⁰: Ջ. Գարստանդը, հակված լինելով նույն կարծիքին, Ազգիին
տեղադրում է Կերասունդի շրջանում: Է. Կավենյակը իր վաղ շրջանի ուսումնասիրություննե-
րում հայասա-Ազգիի հարավային սահմանները սկսում է Երզնկա-Կարին ուղիղ գծով, որը
հյուսիսում հասնում է ընդհուպ Սև ծովի ափերը¹¹: Սակայն ի վերջո նա հանդում է այն եզրա-
կացության, ըստ որի հայասա-Ազգիին տեղադրվում է Եփրատի ավազանում¹²:

Ուսումնասիրողներից Ա. Ջախարովը հայասան տեղադրում է Մեծ Հայքում¹³:

Ի հակադրություն վերոհիշյալ արևելագետների տեսակետների, այս հարցում իրենց ու-
րույն կարծիքն ունեն հայ պատմաբանները, որոնք իրավացիորեն, զիտական փաստարկումների
հիման վրա ցույց են տալիս, որ հայասա-Ազգիին պետք է որոնել միմիայն Հայկական լեռնաշ-
խարհում:

հայասա-Ազգիին իրոք Հայկական լեռնաշխարհում տեղադրելու մասին են վկայում նույն
խեթական աղբյուրները: Այսպես օրինակ՝ Մուրսիլ 11-ը հայասա-Ազգիի վրա արշավելու հա-

¹ E. Forrer, Die Boghazkol-texte in Umschrift, Leipzig, 1926, II, հատ. 42, 53
A § 91, 58 B, § 91, § 94 (այսուհետև՝ 2 BoTU).

² E. Forrer, Hajasa-Azzi, „Caucasica“, 1931, fasc. 9, էջ 2:

³ A. Goetze, Kizzuwatna and the Problem of Hittite Geography, London, 1940,
էջ 19, ծան. 75:

⁴ E. Forrer, նշվ. աշխ.: II. Տ. Երեմյանը ևս իր Ուրարտուի քարտեզում հա-
յասա երկիրը տեղադրում է Բարձր Հայքում և Փոքր Հայքի հյուսիսային մասում: Տե՛ս
Հայկ. ՄԱԽ Ատլաս, Երևան Մոսկվա, 1961, էջ 102:

⁵ A. Goetze, Zur Geographie des Hethiterreichs, „Kleinasiatische Forschungen“,
1927, Bd. I, Hf. 1, էջ 114:

⁶ A. Goetze, Kleinasien, München, 1933, էջ 95: նույնի՝ Kizzuwatna and the
Problem of Hittite Geography, էջ 19—22:

⁷ L. Delaporte, Les Hittites, Paris, 1929, էջ 40, 168, քարտեզներ I—II:

⁸ Fr. Cornelius, Zur hethitischen Geographie: die Nachbarn des Hethiterrei-
ches, „Revue hittite et asianique“, 1958, t. XVI, № 62, էջ 3:

⁹ J. Garstang and O. R. Gurney, The Geography of the Hittite Empire,
London, 1959, էջ 37—48:

¹⁰ Fr. Cornelius, Geographie des Hethiterreiches, „Orientalia“, 1958, vol. 27,
fasc. 3—4, էջ 239:

¹¹ E. Cavaignac, L'extension de la zone des Gassas a l'Ouest, „Revue hit-
tite et asianique“, 1931, fasc. 4, էջ 103—105:

¹² E. Cavaignac, La place du Pala et du Tumanna, „Revue hittite et asiani-
que“, 1936, t. VI, 22(23), էջ 176:

¹³ А. Захаров и Ж. Конгено, Хетты и хеттская культура, Москва, 1924,
էջ 105:

²² Н. А д о н ц, *Армения в эпоху Юстиниана*, С. Петербург, 1908, *т. 98—79*.

Տեղեկագիր վերին Հայոց» աշխատության մեջ խոսելով Կամախից հարավ և արևմուտք ընկած գավառների մասին, հիշատակում է նաև Ղուռուշան գավառը, որը «...երկիր խոր և թաւամայրի, որ ի գրոց Աղնցիք ասեն...»²³։ Հակոբ Կարենցու կողմից հիշատակվող Ղուռուշան գավառի շրջանում էլ մենք տեղագրում ենք Ազգին, որը տարածվում էր Մեծուրի լեռների ստորոտներից մինչև Տուժիկի լեռները։ Այսպիսով Ազգին պետք է որոնել ոչ թե բուն հայաստանից հյուսիս, մերձպոնտական շրջանում, այլ ընդհակառակն՝ հայաստանից հարավ՝ մինչև Իսուվայի սահմանները։

Արիպսա (Aripsa)

Արիպսա քաղաքը հիշատակվում է խեթական աղբյուրներում, կապված Մուրսիլ II-ի երկրորդ արշավանքի հետ դեպի հայասա-Ազգի։ Ինչպես վկայում է Մուրսիլ II-ի տարեգրությունը, խեթական թագավորը իր զորքերը կենտրոնացնելով Ինգալավա քաղաքում, հայասա-Ազգիի դեմ երկրորդ արշավանքը սկսում է՝ հարձակվելով Արիպսա քաղաքի վրա, որը «ծովի մեջ էր գտնվում» (URU A-ri-ip-sa-aš ŠA(G)A.AB.BA ki-it-ta-ri)²⁴։

Խեթական բնագրում Արիպսայի այսպիսի նկարագրությունը ուսումնասիրողների մեջ առաջ է բերել տարբեր կարծիքներ։ Է. Ֆոռերը սխալմամբ (հետագայում նա վերանայեց իր այս տեսակետը) հիմք ունենալով խայասական այս քաղաքի դիրքը և վկայությունն այն մասին, որ նա գտնվում է ծովի մեջ ու շրջապատված է ժայռերով, փորձեց ընդհանրապես գծել հայասա-Ազգիի սահմանները, գտնելով, որ այն պետք է տեղադրվի Սև ծովի հարավում, Տրապիզոնից հարավ-արևելք ընկած շրջանում։ 1927 թ. է. Ֆոռերի այս տեսակետը իր պաշտպանությունը գտավ Ա. Գյոտցեի կողմից²⁵։ Հետագայում վերանայելով իր կարծիքը, է. Ֆոռերը փորձում է Արիպսան որոնել Վանա լճի արևմտյան ափին, Կիզվան-Դաղ կոչվող վայրում²⁶։

Արիպսան Սև ծովի ափին տեղադրելու տեսակետի ջիւղ պաշտպաններից են Զ. Գարստանգը և Օ. Գերենյը²⁷։ Արիպսան նույնացնելով Սև ծովի ափին գտնվող ժամանակակից Այրեսուն (İresun) քաղաքի անվան հետ, նրանք այն տեղադրում են Կերասունգի տեղում, որտեղ նույնպես ժայռոտ լեռներ կան։

Արիպսայի տեղագրման հարցում միանգամայն տարբեր կարծիքներ են հայտնել Ն. Ադոնցը, Գ. Ղափանցյանը և Հ. Մանանդյանը։

Ն. Ադոնցը Արիպսան ձգտում է որոնել Արարկիից արևելք, Եփրատի ափերի մոտ ընկած ճահճային շրջանում²⁸։ Այլ մոտեցում է ցուցաբերում Գ. Ղափանցյանը, որն իրավացիորեն ցանկանում է պարզեցում մտցնել այդ հարցում։ Գ. Ղափանցյանի հարցադրումը հանգում է նրան, թե արդյո՞ք խեթական բնագրի «Արիպսա քաղաքը ծովի մեջ էր գտնվում» արտահայտությունը պետք է բառացի հասկանալ։ Գ. Ղափանցյանի կարծիքով խայասական Արիպսան կարելի է տեղադրել Արաքսի վտակ Մուրցի ակունքները կազմող լճի մոտ գտնվող Բերգակ կամ Թյոսե-Մեհմեդ գյուղի տեղում, էրզրումի ճահճների հենց կողքին, որտեղ մ. թ. VI դ. հիշատակվում է Արարեսաս գյուղը²⁹։ Էրզրումի մոտ գտնվող այդ լիճ-ճահճը ներկայումս ունի 15 կմ երկարություն և 5 կմ լայնություն։ Վերջնականապես Արիպսան տեղադրելով էրզրումի շրջանում գտնվող այդ լճի ափին, Գ. Ղափանցյանը միաժամանակ նշում է Փոքր Հայքի արևմտյան մասում, Սեբաստիայի և Նիկոպոլի մոտ հիշատակվող Արարիսոս (Arabisos) կամ Արեպսուն (Arepson) վայրը (ներկայիս Նիկսի շրջանում), որը հնչյունական նմանություն ունի խայասական այդ տեղանվան հետ³⁰։

²³ Վ. Ա. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ (XIII—XVIII դդ.), Երևան, 1956, հատ. 2, էջ 352։

²⁴ 2BoTU, 58B, § 103.

²⁵ A. Gotze, Zur Geographie des Hethiterreichs, „Kleinasiatische Forschungen“, 1927, Bd. I, Hf. 1, էջ 114.

²⁶ E. Forrer, Hajasa-Azzi, էջ 15.

²⁷ J. Garstang and O. R. Gurney, The Geography of the Hittite Empire, էջ 38.

²⁸ N. Adontz, Histoire d'Arménie, էջ 39—40.

²⁹ Г. Кананцян, Историко-лингвистические работы, էջ 56.

³⁰ Նույն տեղում։

2. Մանանդյանը հերքելով Ն. Ադոնցին և Գ. Ղափանյանին գտնում է, որ է. Ֆոոների կողմից Արիպսայի տեղադրումը վանա լճի հարավ-արևմտյան մասում, նրա թերակղզիներից մեկի վրա, միանգամայն ճիշտ է և ցանկանում է զարդացնել ու հիմնավորել այդ տեսակետը³¹։

Մեր կարծիքով միանգամայն սխալ է Արիպսայի տեղադրումը Սև ծովի շրջանում։

Արիպսայի տեղադրման հարցում զգալի պարզություն կարող է մտցնել Դուկկամմա (Duk-kamma) քաղաքի ճիշտ տեղադրումը, որը հիշատակվում է նույն Մուրսիլ II-ի տարեգրության մեջ, ինչպես վկայում է Մուրսիլ II-ը, Արիպսան գրավելու հաջորդ օրը նա հարձակվում է Դուկկամմա քաղաքի վրա և նվաճում այն։ Կասկածից վեր է, որ Դուկկամմա քաղաքը երբեք մեծ հեռավորության վրա չէր կարող գտնվել Արիպսայից։

Ինչպես ճիշտ նկատել է է. Ֆոոերը, Իսուվայի և խեթների միջև կնքված մի գաղնագրում Դուկկամմա քաղաքը հանդես է գալիս Դուկկամմանա ձևով, հետևաբար այն Իսուվայի քաղաքներից է³²։ Այսպիսով մենք կարողացանք պարզել մի շատ կարևոր հանգամանք, այն է՝ Դուկկամմա քաղաքը գտնվում էր Իսուվայում, այսինքն պատմական Մոփք գավառի կամ ներկայիս Խարբերդի շրջանում։

Խեթների և Իսուվայի միջև կնքված այս գաղնագրում Դուկկամմանա քաղաքի կողմից հանդես են գալիս Այիսսիյա (Aiššijaš) և Արիբիզի (Arihbizzi) անձնավորությունները։ Մեզ թվում է, որ Arihbizzi անվան մեջ թաքնված է Aripsa քաղաքի անունը։ Իսուվական այս անձնանվան ստուգաբանումն էլ կարծես խոսում է մեր այս թեզի օգտին։ Arihbizzi անձնանունը բաղկացած է երկու հիմնական մասերից։ Ուսումնասիրողներից Գ. Պուրվեսը, որի հետ համամիտ չէ Գ. Ղափանյանը, այս անվան առաջին մասը՝ Arih-ը առաջացած է համարում Arīp ձևից, երբ նախորդ „p“-ն ասիմիլյացիայի է ենթարկվել հետագա „h“-ի³³։ Անվան երկրորդ մասը՝ bizzi-ն, որը հատկապես հանդես է գալիս խուրրիական անձնանուններում biz || piz ձևերով, մի շարք ուսումնասիրողների (Ենսեն, Մեսսեր-շմիդա, Սպեյգեր) կարծիքով տալիս է նաև 1 pis տարածք, որը Յ. Ֆրիդրիխը կապում է ուրարտական pišušē «ուրարտություն» բառի հետ³⁴։ Arihbizzi-ի և Aripsa-ի նմանությունը նկատել նաև Գ. Զահուկյանը³⁵։

Դուկկամմայից ոչ շատ հեռու գտնվող Արիպսան ամենայն հավանականությամբ նույնպես գտնվում էր Իսուվայում։ Մեր այս տեսակետի օգտին է վկայում նաև ինգալավա քաղաքի ճիշտ տեղադրությունը։

Ինչպես արդեն վերևում նշեցինք, Մուրսիլ II-ը իր արշավանքը Արիպսայի դեմ սկսում է ինգալավա քաղաքից, որտեղ կենտրոնացված էին խեթական զորքերը։ Ինգալավա քաղաքի երկիրը, որը հունա-հռոմեական աղբյուրներում հանգես է գալիս իբրև առանձին գավառ՝ Անգե-լենա, իսկ հայկական աղբյուրներում՝ Անգեղտուն ձևով, գտնվում է Արևմտյան Տիգրիսի ակունքների շրջանում։ Այստեղ է մինչև այժմ հայտնի Ակլ գյուղը, որը պիտի լինի ինգալավա քաղաքի տեղում։ Հայկական լեռնաշխարհի հարավում գտնվող ինգալավայից դեպի Խայասա-ձկզդի երկիրը արշավելու համար խեթները պետք է շարժվեին հյուսիս, այսինքն ճանապարհն անցնելու էր Իսուվայի վրայով, ներկայիս Խարբերդի դաշտով։ Ինգալավայի այսպիսի տեղադրությունն էլ է բացասվում, եթե նույնիսկ ընդունելու լինենք Սև ծովի հարավային ափին գրտնրվող Արիպսայի վրա Հայկական լեռնաշխարհի հարավից հարձակում գործելու փաստը, քանի որ խեթական զորքերը դեպի Սև ծով կարող էին արշավել Հալիս գետի ավազանից հյուսիս ձգվող ճանապարհով։

Հակված լինելով Արիպսան, ինչպես և Դուկկամման Իսուվայում տեղագրելու տեսակետին, մեզ մնում է Արիպսան որոնել միայն այս շրջանում գտնվող լճերից որևէ մեկի ափին։ Հավանաբար այն գտնվում էր Խարբերդից ոչ հեռու գտնվող Մոփք լճի (ներկայիս Գյուլջուկ) ափին և հանդիսանում էր Խայասա-Ազգիի պաշտպանված բնակավայրերից մեկը՝ նրա հարավային սահմանի վրա։

³¹ Я. А. Манандян, О некоторых спорных проблемах истории древней Ар-
мени, էջ 101։

³² E. Forrer, Hajas-a-Azzi, էջ 19—20։

³³ Gelb J., Purves P., Mac Rael, Nuzi Personal Names, Chicago, 1943, էջ 204։

³⁴ Г. Кананцян, Историко-лингвистические работы, էջ 77։

³⁵ G. B. Jahukyan, The Hayaša Language and its Relation to the Indo-European
Languages, „Archiv orientalni“, № 29, 1961, էջ 373։

Արմատանա (Armatana)

Արմատանա երկիրը, ինչպես մենք ենթադրում ենք, մտնում էր իսլամ-Աղգիի կազմի մեջ և որպես առանձին ցեղային միություն զգալի վտանգ էր սպառնում հարևան խեթերին։ Արմատանայի տեղադրման հարցը նույնպես վիճելի է համարվում արևելագիտության մեջ։ Խեթական աղբյուրների սակավաթիվ վկայություններում ևս Արմատանայի ճիշտ տեղադրումը չի արտացոլվում։ Խեթական թագավոր Սուպլիլուիումայի և Միտանիի թագավոր Մատիվազայի միջև կնքված դաշնագրում հիշատակվում է, որ 15 երկրներ, այդ թվում և Արմատանա երկիրը, ապստամբեցին Թուղխայիա III խեթական թագավորի դեմ։ Ապստամբ երկրների այդ ցուցակում Արմատանա երկիրը հիշատակվում է վերջում³⁶։ Խեթական մեկ այլ ընագրում հիշատակվում է, թե ինչպես հեռվից թշնամի Արմատանա երկիրը հարձակվեց իսթի երկրի վրա և փողոպտեց այն, իսկ Կիզուվադնա երկիրը դարձրեց իր սահմանը։ Ա. Գյոտցեն Արմատանան տեղադրում է հարավում, մինչև Կիլիկիայի սահմանները, Թեգարամա երկրից հարավ³⁷։ Այս կարծիքին էր նաև Օ. Գիրենսը, որը, սակայն, հետազոտում վերանայեց իր տեսակետը³⁸։ Ք. Գարստանգը և Օ. Գիրենսը Արմատանա երկիրը տեղադրում են Մելիտենեի և Սամոսատի միջև մի ինչ-որ տեղում, Արավաննա երկրի սահմանակից շրջաններում³⁹։ Ուսումնասիրողներից Ֆ. Կոռնելիուսը գտնում է, որ Արմատանա երկիրը պետք է որոնել ծայրագույն հարավ-արևմուտքում, դաշտային Կիլիկիայի շրջանում, Ադանայի և Տարսոսի մոտ⁴⁰։ Նա այս կարծիքին է հանգում հիմնականում այն պատճառով, որ խեթական մի ընագրում Արմատանա երկիրը հիշատակվում է Մունախարա (Munahara) երկրի հետ միասին, իսկ մեկ այլ պաշտամունքային ընագրում վերջինս հանդես է գալիս Ադանիյա և Տարսա երկրների հետ, որոնք տեղադրվում են ներկայիս Ադանայի և Տարսոսի տեղում։ Նա Արմատանան վերջնականապես տեղադրում է Կիլիկիայում գտնվող Ռամիթա ընկավայրի տեղում⁴¹։

Մեր կարծիքով ճիշտ է մի շարք հայագետների այն տեսակետը, թե Արմատանա երկիրը պետք է փնտրել Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան ծայրամասում։ Հայկական լեռնաշխարհում քիչ չեն ձգձգ արմատն ունեցող տեղանունները։ Այսպես, օրինակ, Արմաշ անունով գյուղ է հանդիպում Փոքր Ասիայում (Իդնիմիր գավառ), Արմըշան, Արմըճան կամ Արմոճան՝ գյուղ՝ Չորրորդ Հայքում (Բալուի շրջան), Արմիդոն գյուղ՝ Վասպուրականի Արճնշ գավառում, Արմշատ գյուղ՝ Վանի նահանգի Շատախ գավառում, Արմոթաղ գյուղ՝ Տիվրիկի գավառում, Արմուտան կամ Արմուտան գյուղ՝ Բարձր Հայքում, Գարանաղի (Կամախի) գավառում⁴²։ Հատկապես ուշադրության արժանի է վերջին տեղանունը։ Ն. Մարտիրոսյանը գտնում է, որ Արմատանա երկրի անունը պահպանվել է հայարենակ Արմտան տեղանվան մեջ⁴³։ Ներկայումս պահպանվել են Արմտան անունով երկու գյուղ (մեծ և փոքր), որոնք գտնվում են Ղուրուշայ գավառակում, երբեմնի հայարենակ Զիմառա և Բինկյան գյուղերից ոչ շատ հեռու։ Հենց այստեղ էլ, ըստ Ն. Մարտիրոսյանի, պետք է տեղադրվի Արմատանա երկիրը։ Արմատանա գյուղի մասին հայ մատենագրության մեջ պահպանված ամենահին տեղեկությունը պատկանում է XVII դարի մատենագիր Հակոբ Կարենցուն, որն իր «Տեղեկագիր վերին Հայոց» աշխատության մեջ հիշատակում է. «...Եւ զնացեալ հասանէ մինչ ի Քարաձոր Յակնայ և Արարկերու։ Եւ յնսկոյսն ունի Կամախ Գ(3) գավառս՝ հասանալայ որ բաղում գիւղը կան և Արմտաններն, որ զնացեալ հասնէ մինչև իր Տիւրիկ և միւսն է Ղուրուշան, երկիր խոր և թաւամայրի, որ ի գրոց Աղեցիք ասեն...»⁴⁴։

³⁶ E. Weidner, Politische dokumente aus Kleinasien die Statsverträge in Akkadischer Sprache aus dem Archiv von Boghazkoi, 1923, էջ 5—7։

³⁷ A. Gotze, Kizzuwatna..., էջ 25—26։

³⁸ O. R. Gurney, The Hittites, London, 1952, էջ 27—28։

³⁹ J. Garstang and O. R. Gurney, The Geography..., էջ 44—45։

⁴⁰ Fr. Cornelius, Geographie..., „Orientalia“, 1958, vol. 27, fasc. 3, էջ 240։

⁴¹ Fr. Cornelius, Revue hittite et asiatique. 1958, t. XVI, № 62, էջ 6—7։

⁴² Ս. Լ. Ֆրիկյան, Ինաշխարհիկ բառարան, Վենետիկ, 1900, հատ. 1, էջ 301—302, 307։

⁴³ Ն. Մարտիրոսյան, Պրպտումներ փոքրասիական անուններու մասին, «Պատմ.-մա.-բանասիրական հանդես», № 3(4), 1961, էջ 92—93։

⁴⁴ Վ. Ա. Հակոբյան, Մանր մամանակագրութիւններ (13—18-րդ դդ.), Երևան, 1956, հատ. 2, էջ 552։

հեթական մի քանի բնադրերում Արմատանան հիշատակվում է հայաստյի հետ միասին. դա կարծես հուշում է հայաստյի սահմանամերձ շրջաններում էլ որոնել այն⁴⁵.

Պրոֆ. Ս. Իրեմյանը Արմատանա երկիրը տեղադրում է Կամախից ոչ հեռու գտնվող Արմրտան դյուղի շրջանում և այն համարում հայաստյի մարդերից մեկը⁴⁶. Արմատանա երկրի այսպիսի տեղադրումը միանգամայն հավանական է և իրոք այդ շրջանում էլ պետք է որոնել այն, այսինքն՝ Կամախի (Կումմախայի) և Տիվրիկի միջև:

Լ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

АРМЯНЕ В ИНДОНЕЗИИ

В начале XVII в., в период насильственного переселения армян шахом Аббасом из Армении в Иран, происходила интенсивная эмиграция армян в страны Юго-Восточной Азии, в частности в Индию, Бирму, Индонезию. Армяне начали поселяться в Индонезии в первой половине XVII в. и в дальнейшем образовали небольшую по численности (количество армянского населения в стране доходило до 2000 чел.)¹ колонию.

В армянской советской историографии нет специальных работ, освещающих историю армянской колонии в Индонезии. В зарубежной историографии этому вопросу посвящена книга Ордананяна: «История армянской колонии Нидерландской Восточной Индии»². Известный зарубежный арменовед, профессор Аршак Алпояджян в своем обширном трехтомном исследовании «История армянской эмиграции» останавливается также на истории армянской колонии в Индонезии³.

Некоторые сведения об армянах-поселенцах в Индонезии имеются в энциклопедиях (см. Encyclopaedia van Nederlandich-Indie s'Gravenhage Amsterdam-Batavia, т. I, стр. 60; Ensiklopedia Indonesia, Groningen-Djakarta, т. I). Первые армянские поселения в Индонезии были образованы на острове Ява индийскими армянскими купцами из Мадраса⁴. Так, в отчете Ост-Индской торговой компании за 1656 г. есть упоминание о поселении армянского купца по имени: Ходжа Солимха в гор. Магосар⁵. О поселении армян в Батавии свидетельствуют надгробные камни XVIII в. на местном общественном кладбище⁶. Имеются данные, свидетельствующие о том, что среди первых поселенцев-армян в Индонезии были купцы из Амстердама⁷. Ост-Индская компания эдиктом от 31 марта 1747 г. утвердила привилегии армян в Индонезии, подобно европейцам, как «свободных граждан». Еще в 1638 г. армянский купец Ходжа Панос Калантар заключил договор с Ост-Индской компанией на получение права свободного гражданства для поселенцев-армян⁸.

⁴⁵ H. G. Guterbock. The Deeds of Suppiluliuma as Told by his Son, Mursili II, „Journal of Cuneiform Studies“, 1956, vol. X, № 3, fr. 24.

⁴⁶ Հայկ. ՍՍՏՒ Առյառ, Երևան - Մոսկվա, 1961, Ս. Իրեմյան, Ուրարտու պետությունը և հարևան երկրները մ. թ. ա. VIII—VII դդ., քարտեզի էջ 102:

¹ См. М. М. Бакунин. Тропическая Голландия. Пять лет на острове Яве. СПб., 1902, стр. 193.

² Յ. Յորդանանյան, Նիդերլանդական Արևելյան Հնդկաստանի հայ գաղութի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը. Երուսалим, 1937.

³ Ա. Ալպոյաճյան, Հայ գաղթականություն պատմություն, հայերի ցրումը աշխարհի պանաղան մասերը. т. III, Каир, 1961, հիշակական Արևելյան Հնդկաստանի հայերը (Ինդոնեզիա), стр. 447—473.

⁴ Յ. Յորդանանյան, указ. соч., стр. 15.

⁵ См. Ա. Ալպոյաճյան, указ. соч., стр. 449.

⁶ Վ. Աղաջան, Պատի օրացույց, Батавия, 1935.

⁷ См. Ա. Ալպոյաճյան, указ. соч., стр. 449.

⁸ См. там же.

Армяне поселялись в Индонезии главным образом на острове Ява, в больших городах, таких, как столица страны Батавия и Сурабая. Остров Ява явился средоточием армянской колонии в Индонезии. В городах Батавия и Сурабая армяне построили церкви, школы, типографии, больницы и клубы. Армяне, поселившиеся в разных странах Юго-Восточной Азии, в торговом и культурном отношении были тесно связаны с армянской колонией Индии, одной из старейших колоний армян в странах Востока.

Армяне, жившие в странах Юго-Восточной Азии, в частности в Индонезии, с целью сохранения национальной культуры, отправляли своих детей на учебу в Калькутту—в «Армянскую гуманитарную академию». Здесь наряду с естественными науками и иностранными языками преподавались армянский язык и литература, история Армении и национальной церкви. Армянская молодежь, получившая образование в Калькутте, передавала свои знания армянским детям в разных странах Юго-Восточной Азии.

Армяне в Индонезии играли заметную роль в торговле, вывозя из страны пряности и восточные сладости. В начале XIX в. на острове Ява, в городах Батавия и Сурабая насчитывалось около десяти видных армянских семейств⁹. По свидетельству Орданяна, труды которого были посвящены изучению истории армян в странах Юго-Восточной Азии, в 1828 г. в государственном банке на Яве имелись вклады армянских коммерсантов на 12 000 акций. Этими вкладчиками были коммерсанты Орданян, Ованесян и Геворг Авет Закарян¹⁰.

Одним из крупных коммерсантов Индонезии являлся известный деятель армянской колонии на Яве Ата Овсеп Амирханян. Он был влиятельным человеком в Индонезии. Свое богатство он приобрел посредством международной торговли, вывозя из Индонезии предметы роскоши и восточные сладости, которые он отправлял в Европу на собственных кораблях.

В связи с присоединением Восточной Армении к России (1828) Нерсес Аштаракеци обратился к видным представителям армянских колоний в странах Европы и Азии с посланием, в котором подчеркивал важность этого события для истории армянского народа. Это послание Нерсеса Аштаракеци получил также Овсеп Амирханян. Оно воодушевило Амирханяна и укрепило его решение о возвращении на родину и передаче своего богатства в пользу армянского народа. Под влиянием деятельности Нерсеса Аштаракеци, направленной на освобождение армянского народа от персидского и турецкого ига с помощью братского русского народа, Овсеп Амирханян пишет Аштаракеци следующее письмо: «...Уверяю Вас... что благодаря Богу здесь (т. е. в Индонезии) я ни в чем не имею недостатка. Пользуясь добрым именем и всеобщим уважением, я был одарен судьбой, чтобы иметь значительное богатство. Земли, корабли, постройки — все я имею в достаточном количестве, но все эти обширные дары пока меня не утешают, когда я вспоминаю в каком положении находится моя любимая родина и какие бедствия претерпевают мои соотечественники. И поэтому очень хочу часть моего имущества подарить в пользу моих соотечественников с целью облегчения их положения. Если мои мечты осуществляются, то я со своей семьей и состоянием перееду в Армению и оставшееся богатство отдам в пользу соотечественников, ибо только мои имения дают в большом количестве сахар и кофе; уже не приходится говорить об остальных владениях, которые ежегодно дают большие прибыли благодаря Богу: я здесь живу подобно здешним владельцам-голландцам. Единственно, что меня огорчает, это тяжелое положение моей любимой родины... Но тем не менее я все передаю на Ваше усмотрение, и я готов следовать Вашим советам и выполнять все, что Вы поручите мне»¹¹.

⁹ См. Հարսէթյունն Յովնանյան, Պատմութիւնն Նոր Զուգայի, стр. 195.

¹⁰ Геворг Авет Закарян был одним из образованных людей армянской колонии Индонезии. Знал индонезийский и европейские языки. Он написал ряд книг, одна из которых называется «Ява, или Нидерландская Индия и армяне» (на армянском языке).

¹¹ Это письмо историк Александр Ерицян перевел на армянский язык с русского текста, представленного царю Николаю I (см. книгу «Լեւոնայն հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի հայք XIX դարում». Тифлис, 1902, стр. 507—511).

Это письмо Нерсес Аштаракеци отправил в Петербург, тайному советнику царя Хачатуру (Христофору) Лазареву, который при содействии министра внутренних дел графа Бенкендорфа передал его царю Николаю I. В ответном письме царя от 3 декабря 1830 г. говорилось: «...Пусть Амирханян приедет сюда, и все вопросы, интересующие его, разрешим при личном свидании». Х. Лазарев, получив от царя этот ответ, пересылает его Нерсесу Аштаракеци.

В начале XIX в. в армянской колонии Индонезии видной фигурой был Манук Манучарян. Будучи патриотом родины, он свою деятельность направлял на развитие культуры среди своих соотечественников. С этой целью он решил построить в Лондоне армянскую школу для подготовки квалифицированных учителей. На это мероприятие он ассигновал один миллион гульденов¹². Но эта идея Манука Манучаряна не была осуществлена. После смерти Манучаряна его богатство по завещанию было передано его сестрам — Мариам Арутюнян и Такуи Манукян, которые также сыграли видную роль в истории армянской колонии Индонезии. Их деятельность была направлена на создание и развитие армянских очагов культуры в странах Юго-Восточной Азии. В мае 1852 г. по инициативе сестер Манучарян в Батавии, на Всеобщем Собрании армянской колонии Индонезии, было создано «Армянское общество». Целью этой организации была культурно-просветительная работа среди армянского населения Индонезии. В задачу «Общества» входило также оказание материальной помощи нуждающимся семьям армянской колонии¹³.

В 1854 г. на средства упомянутых выше сестер была построена каменная церковь в Батавии, имевшая также странноприимный дом, библиотеку и Национальный салон для проведения культурных вечеров¹⁴. По свидетельству арменоведа Т. Гушакяна, посетившего в 1917 г. страны Юго-Восточной Азии в качестве нунция Эчмиадзинского армянского католикосата, в библиотеке при церкви в Батавии насчитывалось около 1000 книг¹⁵.

При участии сестер Манучарян в 1855 г. на острове Ява была открыта армянская школа имени Манука Арутюняна. Эта школа имела дневное и вечернее отделения. Учительский совет школы имел пестрый национальный состав: сюда входили голландцы, англичане, французы и др. Они преподавали иностранные языки и естественные науки. Наряду с детьми-армянами в школе учились дети индонезийцев и иностранцев¹⁶. В связи с уменьшением армянского населения в Индонезии в 1872 г. школа была закрыта. Несмотря на это, армянское молодое поколение продолжало свое образование в домашних условиях. Кроме того, сдав здание армянской школы на Яве в аренду, на вырученные деньги представители армянской колонии в Индонезии организовали продолжение образования армянской молодежи в Калькутте, ежегодно посылая туда 14 человек.

Армяне в Индонезии, следуя примеру армянской колонии в Индии, основывали различного рода национальные организации культурного и благотворительного характера. Эти организации действовали самостоятельно и ежегодно представляли «Всеобщему съезду армянской колонии» отчет о проделанной работе.

Армяне в далекой Индонезии имели свое управление. Армянская колония на Яве была официально признана специальным указом № 7 «Государственных ведомостей» («Staatsblad») от 1880 года. В законодательстве Индонезии имелся раздел, посвященный правовому положению армян в Индонезии. В 1880 году текст этого закона был переведен с голландского языка на древнеармянский, а в 1930 г. он был заново пере-

¹² См. Գ. Տ Ե Ր - Գ Մ Ո Ւ Մ Ր Յ Ն, Գ Ր Ր ՈՒ Կ Ն Ր Ջ ՈՒ Ղ Մ, 1833.

¹³ См. Յ. Յ Ր Ղ Մ Ն Ն Յ Յ Ն, указ. соч., стр. 31.

¹⁴ См. Encyclopaedia van Nederlandich—Indie s'Grakenhage—Amsterdam—Batavia, т. 1, стр. 60.

¹⁵ См. Բ. Գ ՈՒ Ղ Մ Կ Յ Ն, Հնդկահայք, տպագրություններ և տեղեկություններ. Иерусалим, 1941, стр. 283.

¹⁶ Там же, стр. 227.

работан. После образования в 1945 г. молодой республики Индонезии ее правительство в 1950 г. утвердило специальный раздел конституции для армян. Согласно этой конституции, армяне, достигшие 21 года, имеют право избирать и быть избранными в Армянский общественный совет (*Հայրազան ատյան*), который состоит из пяти человек, избираемых на 3 года, с проведением ежегодного отчетного собрания. Армянский общественный совет имеет собственный устав, последняя статья которого, состоящая из двух вариантов, гласит следующее:

а) Если на Яве не останется ни одного армянина, то вся земля со всеми постройками на ней и с имуществом, относящимся к армянам, должна быть передана католико-су всех армян, резиденцией которого является Эчмиадзин (Армения), и он в течение 10 лет получает соответствующий доход.

б) Если в течение этого времени (10 лет) армяне не будут жить на этих землях, в этом случае все эти земли должны быть проданы; 75% с суммы, полученной от продажи, должны быть переданы армянскому католико-су для нужд армянского народа, а 25% следует отчислить в пользу развития школьного образования в Новой Джульфе (Иран)¹⁷.

Несмотря на то, что индонезийские армяне живут вдали от своей матери-родины, они не утрачивают свой национальный облик, свою культуру и обычаи. Об этом свидетельствует наличие в Индонезии армянских школ, спортивных обществ, благотворительных организаций и даже национального театра¹⁸. Армяне принимали активное участие в национально-освободительном движении народов Индонезии. В процессе освобождения Индонезии от японского ига и голландских колонизаторов они не стояли в стороне, а сражались вместе с индонезийскими патриотами за свободу и независимость своей второй родины.

Л. ТЕР-МКРТЧЯН, А. ГЕОКЧЯН
(Москва)

¹⁷ См. там же, стр. 253.

¹⁸ См. газету «*Հայրենիք*», Бейрут, июль 1961 г.